№ 238 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 238

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի։
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կովկ. Հայոց Բարեգ. Ընկ. Գօրու վիճակի ԲԱԽՈՒՐԵԼ ԳԻՒՂԻ դպրոցի համար, որին նըպաստում է ինժենէր Միքայէլ Գր. Ալիբէգեանը, հարկաւոր են

ԵՐԿՈՒ ԴԱՍԱՏՈՒՆԵՐ,

մէկ աւագ ուսուցիչ 450 ռ. ռոճիկով, իսկ միւսին 400 ռ.։ Մէկը պէտք է իմանայ վրացերէն լեզուն։ Ցանկացողները պէտք է դիմեն Ընկերութեան գրասենեակը՝ Աբաս-Աբաթեան հրապարակ № 7.

Հարկաւոր են նոյնպէս մի հմուտ ՀԱՇՒԱՊԱՀ և մի ԲԱՐՏՈՒՂԱՐ գաղթականների գործերի համար։ Դիմել նոյն տեղ։ առ. 776. 2—2

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
(Գրիբոեդովսկայա, 8)
Կիրակի, նոյեմբերի 1-ին, կը կայանայ հայերէն լեզւով
ԵՐԿՈՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
1) Օր. ՎԱՐԴՈՒՀԻ ՍԵԴՐԱԿԵԱՆ ԹԱՌԱՅԵԱՆՑ—
ՉԷԽՕՎԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ
(Նրա տարեշրջանը, նա որպէս ստեղծագործող, հոգեբան, գեղագէտ, դրամատուրգ, և որպէս ճշմարտութեան, բարութեան ու սիրոյ իդէալների հետևող)։
2) Փիլիս.-դոկտոր ՍԵԴՐԱԿ ԹԱՌԱՅԵԱՆՑ—
ՄԽԻԹԱՐԱԿԱՆ ԽՕՍՔ ՎՇՏԱՀԱՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ
1) Պէտք չէ յուսահատվել։ 2) Վերածնութեան ճանապարհը—ա) Ընտանիք. բ) Դպրոց, գ) Ինքնակրթութիւն, դ) Մամուլ ու գրականութիւն, ե) Թատրոն և զ) Պատարագ ու ազնիւ աշխատանք։

Տեղերի գները 20 կոպ. մինչև 1 ռուբլի։ —◆— Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Տոմսակները ծախվում են՝ 1) «Գուտտենբերգ» գրավաճառանոցում (Երևանեան հրապարակ), 2) Գրավաճառանոց „Просвѣщеніе“, Կլուբի տակ, 3) Կաթնարան «Կաֆէ-Ցենտրալ» (դումայի տակ), 4) Երաժշտական դպրոցի շվէյցարի մոտ ու 5) Դասախօսութեան օրը դահլիճի մուտքում։ առ. (Հ. Զ. Կ.) 773. 4—2

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈԹՈՐԱՔՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29.
առ. (ա. օ.) 504. 100—73

ԲԺԻՇԿ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ մասնաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7-ը։
Бебутовская ул. № 26. 3 րդ օրիորդաց գիմնազիայի կողքին։
առ. 779. 50—1

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ—ոսկուց, արծաթից, փարփորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։
(ա. օ.) առ. 515. 100—58

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր
ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐԶՕՅԵԱՆ
ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը։ Սերգիէևսկայա փող. № 1. Տէլէֆօն № 16—67։
առ. 753. 50—7

ՋԶՈՒԽԵԼԻ ԿՈՂՈՊՏԻՉՆԵՐ

«Մշակի» երէկվայ համարում տըպված նամակը Իգդիրից՝ ցաւալի խորհրդածութիւնների առիթ է տալիս։

Ամիսներ շարունակ ամբողջ հայ մամուլը, ընկերութիւնները, բարեգործական հաստատութիւնները, բիւրոները, կոմիտէները նկարագրում են հայ փախստականների սոսկալի վիճակը, կրած դառն աղէտները, կոչ են անում հասարակութեանը օգնել այդ թշուառներին, օգնել նրանց վերադառնալու իրանց տները և նկարագրում են աշխարհ լեզուով. նոյնիսկ օտարները խղճում են. ամբողջ ամիսներով թշուառ հայ փախստականը կրում է ամեն տեսակ զրկանք, նեղութիւն, տանջանք, քաղց, մերկութիւն, բայց իր սրտի խորքում տածում է մի յոյս՝ մի օր վերադառնալ իր տունը, ուր նա թագցրել է իր ունեցածը։ Եւ ահա մեր իսկ հայերի մէջ գտնվում են հրէշներ, տմարդ արարածներ, որոնք թշուառ փախստականների աղէտներն իրանց շահագործման առարկայ են դարձնում։ Նրանք, այդ հրէշները, վարձում են ֆուրգոններ Իգդիրում, ուղարկում Վան, բանում տների թագստոցները, որոնց մէջ թշուառ փախստականները, փախուստի ժամանակ, պահել են իրանց գոյքը, կողոպտում այդ ամենը, բեռնում ֆուրգոնների վրա և բերելով Իգդիր ծախում։ Սա կատարեալ մարօդէրութիւն է, և, դժբաղդաբար, այդ մարօդէրները հայեր են։ Եւ այդ մարօդէրութիւնը կատարվում է Իգդիրում ոչ միայն հայկական բիւրոների, կոմիտէների աչքի առաջ, այլ նոյնիսկ դրանց գործակալներից մէկը, երբ նահանգապետ Տէրմէնի կարգադրութեամբ գողօնները բռնվում են, աշխատում է հովանաւորել կողոպտիչներին։ Այդ գործակալի ապօրէն վարմունքի համար առաջ ևս շատ գանգատներ և տրտունջներ են եղել

. . . .

Անհրաժեշտ է խիստ քննութիւն նշանակել՝ երևան հանելու կողոպտիչներին և գամելու նրանց անարգանքի ու նախատինքի սիւնին։

Եթէ մենք հայերս այդպէս ենք վարվում մեր աղէտաւոր եղբայրների հետ, էլ ինչ իրաւունք ունենք տրտնջալու, որ օտարներն անկարեկցաբար են վերաբերվում։

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ծովամերձ շրջանում, նաև Թորթումի լճից դէպի հարաւ-արևելք, Սէվրի-չայ գետից սկսած մինչև Հէյ-դաղ լեռը ընկած զօրաճակատի վրա ընդհարումներ են առաջապահ զօրախմբերի միջև։

Ուրմիայի շրջանում, Հաւէրի հովտից դէպի հիւսիս-արևմուտք ընդհարումներ են քիւրդերի դէմ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 հոկտեմբերի

ՑԵՏԻՆԻԷ.— Պաշտօնական հաղորդագրութիւն.

Հոկտեմբերի 24-ի ընթացքում և հետևեալ գիշերը Գրախովի շրջանում տեղի էր ունենում կատաղի կռիւ։ Ինչպէս և սկզբում՝ մենք արիաբար վանեցինք թշնամուն, որ կրեց մեծ կորուստներ։ Մենք ցրեցինք նաև աւստրիական զօրքերին։

Մնացած զօրաճակատի վրա թնդանօթաձգութիւն է։

ՊԱՐԻԶ.—Հոկտ. 24-ի ընթացքում Գաբրովոյի մոտ հետևեան կռիւներ չեղան։ Մեր զօրքերը ամրացան իրանց գրաւած դիրքերի մէջ։ Բօլգարները հոկտ. 23-ին Կրիվոլակի մոտ վերսկսեցին կատաղի, բայց անաջող յարձակումները։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Աա գետի ձախ ափին (Կուրլանդիայի Նահ.) մեր զօրամասերին աջողվեց թնդանօթային կրակի աջակցութեամբ գրաւել Ֆրանկէնդորֆ և Պավասսէրնա շրջանը, նաև մի փոքր առաջանալ Բաբիտ լճից դէպի հարաւ։

Միտավայի շրջանում մեր զօրքերը, առաջանալով դէպի հարաւ, գրաւեցին Ջալայ-Օլայ զօրագիծը, իսկ Իկսկիւլից դէպի արևմուտք նրանք գրաւել են Դաբէ գիւղը։

Սվենտէն լճի արևմտեան ափի մոտ վերսկսվեց տաք կռիւ, որը և շարունակվում է։ Մի քանի ռազմավայրում մեր զօրամասերը ներս խուժեցին հակառակորդի առաջին կարգի խրամատները։

Դեմէն լճից դէպի արևմուտք ուժեղ հրաձգութիւն է։ Մեր զօրամասերին շեշտակի հարուածով աջողվեց գրաւել թշնամու մի շարք դիրքեր Պուտա Լիսովսկայա գիւղի մոտ, գերելով 400 զինուոր և վերցնելով գնդացիրներ։

Կոլկի աւանի շրջանում մենք ճեղքեցինք թշնամու զօրագիծը և գրաւեցինք նրա մի քանի ամրացված դիրքերը։ Ընդ սմին գերեցինք 400 զինուոր և ձեռք ձգեցինք 5 գնդացիր. յամառ կռիւը շարունակվում է։

Կոմարովո-Կուլիկովիչի շրջանում յամառ կռիւ է։

ՄԱԼՄԷ.—«Սվէնսկա Աֆտօնբլադէտ» լրագիրը հաղորդում է, որ կիրակի կէսօրին անգլիական մի սուզանաւ Տրելլէբորգից 22 մղոն հեռաւորութեան վրա ջրասուզեց գերմանական «Ունդինէ» շոգենաւը։ Նաւաստիներից խեղդվեցին 19-ը, 6-ը մեռան ճանապարհին, իսկ մի օֆիցէր Զասնիցում։

ՍՏՕԿՀՕԼՄ.—«Բրիգեա» շոգենաւը ջրասուզվել է գերմանական սուզանաւից։

ՊԱՐԻԶ.— Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւն.

Բելգիայում տեղի էր ունենում առանձնապէս ուժեղ խրամատային կռիւ Գէտզաս և Վեզէնգ շրջաններում։ Արտուայում՝ Սոմմայի ու Ուազի միջև և Շամպանիում տեղի էին ունենում ուժեղ թնդանօթային կռիւներ մանաւանդ Ժիվանշի անտառի մոտ, Բէվրէնի և Տագիւրի շրջակայքում։

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են. Հոկտեմբերի 25-ին ամբողջ զօրաճակատի վրա տեղի էին ունենում մեզ համար աջող թնդանօթային կռիւներ և, միևնոյն ժամանակ, հետևան զօրագնդերը մի քանի աջող յարձակումներ գործեցին։

ԼՕՆԴՕՆ.—Անգլիական «Ալաստէր» շոգենաւը ջրասուզվել է. նրա նաւաստիների թւից ազատվել են 3 հոգի։ Բացի դրանից գտնվեց նաւապետի օգնականի դիակը։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 հոկտեմբերի

ԽԱՐԿՈՎ.—Բացվեց քաղաքների ներկայացուցիչների համառուսական համագումարը՝ թանգութեան դէմ մաքառելու և վառելիքի մասին հոգալու համար։

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.—Գերմանական գերութիւնից եկաւ Վարշավայի նահանգապետ բարոն Կորֆը։

ԱԹԷՆՔ.—Նոր կաբինէտը շարունակելու է նախկինի քաղաքականութիւնը։

ՕԴԵՍՍԱ.—Փակվեցին համակօօպէրատիվ և սպառողական համագումարները, որոնք ընդունեցին հետևեալ ցանկութիւնները. գործադրել օրէնսդրական հաստատութիւնների ձեռքով համակօօպէրատիվ օրէնքը երրորդ համառուսական կօօպէրատիվ համագումարի խմբագրութեամբ, գործադրել կենդրոնում ընդհանուր ժողովրդական ուսում, մտցնել տեղական ինքնավարութիւն այն տեղերում, ուր այդպիսին չը կայ, թոյլ տալ կանանց լայն մասնակցութիւն ունենալ կօօպէրատիվ ընկերութիւններին, կազմակերպել Օդեսսայում մշտական կօօպէրատիվ պարբերական դասընթացներ։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Սօֆիայից հաղորդում են, որ բօլգար կառավարութիւնը ի նկատի ունենալով ժողովրդի մէջ սաստկացող դժգոհութիւնը և ագիտացիան, աշխատում է լրագիրների միջոցով տարածել այն տեղեկութիւնը, թէ Սերբիայի դէմ սկսված պատերազմը կը կը վերջանայ նոյեմբերին և որ ոչ մի օտարերկրեայ զօրք բօլգարական հողի վրա ոտք չը պէտք է դնէ։

Կ. Պօլսից հաղորդում են, որ այնտեղ եկած սիրիական պատգամաւորութեան, որ բաղկացած է եղել բացառապէս արաբ մօլլաններից, ցոյց է տրվել մեծ պատիւներ երիտասարդ թիւրքերի կոմիտէի և իշխանութիւնների կողմից։ Պնդում են, որ նրա և թիւրք կառավարութեան միջև բանակցութիւններ են վարվել այն մասին, որպէսզի միջոցներ ձեռք առնվեն դրդելու թափառական արաբներին, որոնք չեն ենթարկվում թիւրքաց զօրքին, մտնել այն թիւրք զօրքերի շարքերը, որոնք շարժվելու են Եգիպտոսի դէմ։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Երէկ կայացաւ Շվէդիայի ազատ մտածող կուսակցութեան տարեկան ժողովը, որին ներկայ էին մօտ 250 պատգամաւոր Շվէցիայի բոլոր կողմերից։ Միաձայն ընդունվեց մի բանաձև, որի մէջ ասված է, թէ Շվէցիայի խիստ չէզոքութեան քաղաքականութիւնը աջակցութիւն է է գտնում ռիգստագի և շվէդ ժողովրդի մեծամասնութիւնից։ Բանաձևի մէջ եռանդուն բողոք է արտայայտվում ինչպէս «ակտիվիստների» դէմ, որոնք ագիտացիա են մղում կռուող պետութիւններից մի խմբակի օգտին, այնպէս և այն մամուլի դէմ, որ իր վարմունքով սպառնում է [illegible] այն վտանգութիւնը, որ գոյութիւն ունի Շվէցիայի՝ դէպի կռուող երկիրները ունեցած անկողմնակալ վերաբերմունքի նկատմամբ։ Ռիգստագի մեծամասնութիւնը բաղկացած է սօցիալիստներից և ազատ մտածողներից։

ԼՕՆԴՕՆ.—Սկուլուդիսը «Թայմսի» թղթակցի հետ Աթէնքում խօսելիս յայտնել է, որ մտադիր է պահել համաձայնութեան պետութիւններին նպաստաւոր չէզոքութիւն։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Այսօր դադարեց գերմանական շոգենաւերի երթևեկութիւնը Զասնիցի և Տրելլէբորգի միջև։

Բեռլինից յայտնում են, որ այնտեղ նաւթը տրվում է միայն առանձին վկայականներով։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պետական Դումայի անդամների կոմիտէտը յայտնում է, որ սկսած 1914 թ. յուլիսի 26-ից մինչև 1915 թ. հոկտ. 20-ը ստացվեցին նուէրներ դրամով 929 967 ռ. բացի դրանից ստացվեց փոխարինաբար 80,000 ռ.։ Ծախսվեց այդ ժամանակամիջոցում 914,638 ռուբլի։ Առ 1-ն հոկտ. 1915 թ. մնում էր գանձարկղում 95,337 ռ.։ Երեք շարժական լազարէթների հիւանդների, 6 սանիտարական խմբերի, աւտոմօբիլների և այլ կազմակերպութիւնների պահպանութեան համար ամեն ամիս հարկաւոր է 75,000 ռ.։ Կոմիտէտը կոչ է անում նուիրել մեր հայրենիքի պաշտպան հերոսների կարիքների համար։ Նուէրները պէտք է ուղղել Տաւրիկեան պալատին՝ Պետ. Դումայի անդամների կոմիտէտի անունով։ Կոչի տակ ստորագրել են նախագահ Ռոձեանկօն և նախագահի օգնականներ Շինգարէվը, Դմիտրիւկովը և իշխան Վոլկոնսկին։

Մի ամսեայ դադարից յետոյ վերսկսվեց ինվալիդների փոխանակութիւնը Ռուսաստանի, Գերմանիայի և Աւստրիայի միջև։

Պիրոգովի ընկերութեան վարչութիւնը թոյլտւութիւն ստացաւ գումարել Մոսկվայում նոյեմբ. 13—16-ը բժշկա-սանիտարական հարցերի առիթով համագումար՝ ներկայ ժամանակի պայմանները նկատի առած։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Նորագոյն տեղեկութիւնները ճշտում են բօլգար զօրքերի ունեցած շատ խոշոր կորուստները վերջին կռիւների ժամանակ։ Միայն Սօֆիա են տարվել 10,000 վիրաւոր։

◆ Գալլիպօլի թերակղզում ափ են իջել 25,000 անգլիացի զինւոր։

◆ Ռումինիա է մեկնում ռուսաց զինւորական մի պատգամաւորութիւն՝ գեներալի գլխաւորութեամբ։

◆ Թիւրքաց սենատում Ահմէդ-Րիզան յայտնել է, թէ Թիւրքիան զինւորական և ֆինանսական տեսակէտներից կորել է։ Այդ յայտարարութեան առիթով սկսվել է իրարանցում։ Էնվէր-փաշայի կարգադրութեամբ Ահմէդ-Րիզային կալանաւորել են։ Գահաժառանգի պահանջով ազատ թողին նրան։

◆ Լեհերը Վարշավայում գերմանական բերդապահ զօրքի պահպանութեան համար վճարում է ամսական 250 հազար մարկ։

◆ „В. В.“-ին հեռագրում են Լօնդօնից, որ, Բեռնից ստացված տեղեկութիւնների համաձայն, հոկտ. 18-ին բոլոր լեհական լրագիրները Վարշավայում լոյս չը տեսան իբրև բողոք նախնական գրաքննութիւն մտցնելու դէմ։

◆ „Р. В.“-ին հեռագրում են, որ գեներալ Բօյաջևի զօրքը մօտեցել է Նիշին և սկսել է ռմբակոծել նրա արտաքին բերդերը։ Նահանջելով Կրագուեվացի մօտից, սերբերը պայթեցրել են զինանոցները։ Վիէննայից հաղորդում են, որ Կևէսի զօրքը ետ է մղել թշնամուն դէպի Միլանովաց։

◆ «Р. В.»-ի ասելով, գերմանացիք չեն հրաժարվել Դվինսկ պաշարելու և Ռիգան ու Դվինսկը առնելու մտքից։ Նրանք բերել են ամենախոշոր թնդանօթներ, որոնք դեռ չեն տեղաւորվել այդ շրջաններում։ Գերմանական լանդշտուրմի զօրամասերն ստացել են նոր տեսակի հրացաններ, որոնց գնդակը այրում է զգեստը։

◆ «Р. В.»-ին հեռագրում են. «Հերքվում է այն տեղեկութիւնը, թէ իբր Սերբիան հաշտութիւն է խնդրում և համաձայն է զիջել Մակեդոնիան և Հիւսիսային Սերբիան։ Պետր արքան գտնվում է բալկանեան զօրաճակատի վրա և ոգևորում է զօրքերին»։

◆ Բուխարէստից հաղորդում են, որ գերմանացիք սոսկալի տանջանքների են ենթարկում Բելգրադի սերբ ազգաբնակութիւնը։ Աւելի քան 200 հոգի գնդակահարվել են։ Սեմէնդրիայի մոտ գտնվել են 60 խեղդամահ արված սերբ զինւոր։

◆ Բօլգարական զօրաճակատի վրա սերբ զօրքերի շարքերում արիաբար կռւում են և կանայք։

◆ «В. В.»-ի ստացած տեղեկութիւնների համաձայն, Բեռնից Վիլհէլմ կայսրը մեկնել է Աւստրո-Ունգարիա, որպէսզի Օրշովի վրայով անցնէ Սօֆիա։ Այնտեղ Վիլհէլմը մնալու է 2 օր, յետոյ կը մեկնէ Կ. Պօլիս։ Ճանապարհին կայզերը մտադիր է որոշ ժամանակ կանգ առնել Մակենզենի գլխաւոր բանակում։ Նէգոտինի կոչված տեղում հանդիպելու են Վիլհէլմը և Ֆէրդինանդ արքան։ Բեռնի լրագիրները մատնանշում են, որ Վիլհէլմի ճանապարհորդութեան նպատակն է ազդել Ռումինիայի և Յունաստանի վրա և նրանց ևս թեքել գերմանական քաղաքականութեան կողմը։

◆ «Бир. Вѣд.»-ն առաջնորդող յօդուած է նուիրել այն լուրերի առիթով, թէ շուտով քառեակ համաձայնութեան պետութիւններից մեկը այնպիսի քայլ կանէ, որ կը դրդէ Ռումինիային իսկոյն հանդէս գալ բօլգարների և գերմանացիների դէմ։ Յիշեալ լրագրի կարծիքով, եթէ այդ լուրը հիմք ունի, ուրեմն պէտք է հարցի կենտրոնում դնել Կ. Պօլսի ապագայի քննութիւնը։ Յամէնայն դէպս աւելի լաւ կը լինի խօսել պարզ ու իրան ժամանակին։ Լրագիրն ասում է, որ ռումինական դեսպան Դիամանդիի գալուստը պէտք է բարենպաստ ազդեցութիւն ունենայ այդ հարցի լուծման վրա։

◆ Ներքին գործերի մինիստրութեան մէջ քննվում է այն հարցը, որ վերաբերում է լեհերի նկատմամբ գոյութիւն ունեցող բոլոր սահմանափակումները վերացնելուն։

◆ «Դէյլի Նիւսը» պնդում է, որ Աթէնքում Բիւլովի որդին և դեսպան Կվադտը շարունակ խորհրդակցում են Թագաւորի հետ, որը միշտ հեռագիրներով կապ է պահպանում Վիլհէլմ կայսրի հետ։ Գերմանացիք կատաղի պայքար են մղում Վենիզելոսի դէմ և վերջինիս բարեկամները երկիւղ են կրում նրա կեանքի համար։ Դրութիւնը դարձել է չափազանց կրիտիկական և հնարաւոր է բացարձակ յեղափոխութիւն ժողովրդի մէջ դէպի Թիւրքերը և բուլղարները։

◆ Երեք բուլղարական գունդ, ինչպէս հեռագրում են Աթէնքից, ամբողջովին գերի են ընկել սերբերին։

ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Р. В.»-ին Օդեսսայից հաղորդում են, որ նահանգական դատարանը ստացել մի շարք գործեր Թիւրքահպատակ հայերի գոյքերին վերջ դնելու մասին։ Միջնորդութիւն է յարուցվում դադարեցնելու այդ գործերի քննութիւնը, ի նկատի ունենալով մինիստրների խորհրդի այն բացատրութիւնը, թէ Թիւրքահայերի վրա չեն տարածվում Ռուսաստանի դէմ կռւող պետութիւնների հպատակների համար որոշված սահմանափակումները։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆ ԵՒ ՌԵՍԿՐԻՊՏ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 հոկտեմբերի

I

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Բարձրագոյն Անուանական հրաման կառավարիչ սենատին.

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջին տարիներում երկրագործութեան ու հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութեան գործունէութիւնը բաւականին ընդարձակվել է, հրամայում ենք՝ յիշեալ գլխաւոր վարչութիւնը այսուհետև կոչել երկրագործութեան մինիստրութիւն, վերակոչելով համապատասխանօրէն այդ վարչութեան բոլոր հաստատութիւնները և պաշտօնեաներին։

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է

ՆԻԿՈԼԱՅ

Ծըգեց՝ ստատս-սեկրէտար Կրիվօշէին։

II

Բարձրագոյն ռեսկրիպտ յանուն ստատս-սեկրէտար, Պետական Խորհրդի անդամ, Բարձրագոյն Պալատի հոֆմէյստէր Կրիվօշէինի։

Ալեքսանդր Վասիլևիչ. 7 տարի առաջ, ձեզ կոչելով երկրագործութեան ու հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի պատասխանատու պաշտօնին, Ես ձեր առաջիկայ գործունէութեան գլխաւորագոյն նպատակ առաջադրեցի գիւղացիական հողատիրութիւնը՝ Ռուսաստանի գիւղատնտեսական կեանքի այդ հիմունքը՝ վերակազմելը։

Գործի լիակատար ճանաչողութեամբ, ձեռք բերված ձեր նախկին ծառայութեան փորձառութիւնից, և անսահման եռանդով դուք ձեռնարկեցիք այդ առաջնակարգ կարևոր խնդրի իրագործման։ Դուք լայն կերպով զարգացրիք հողային բարեկարգութիւնը ու հողաբաժական աշխատանքները, որոնք բաւականին բարելաւեցին գիւղացի ազգաբնակութեան խոշոր մասի հողից օգտվելու պայմանները և ապահովեցին նրա տնտեսական բարեկեցութիւնը։

Ընդ սմին խոշոր աջողութիւններ ձեռք բերվեցին, շնորհիւ ձեր ջանքերի, գաղթականական գործը կանոնաւորելու և պիտանի հողերի տարածութիւնը աւելացնելու մէջ—Թիւրքէստանի և Անդրկովկասի անապատները ոռոգելով, զգալի կերպով աւելացան արքունի անտառների հասոյթները, զարգացան հայրենի բամբակագործութիւնը ու տնայնագործական արհեստը։

Ներկայումս ձեր վատառողջութիւնը դրդում է ձեզ միջնորդել՝ արձակելու ձեզ ձեր պաշտօնից և, ցաւելով բաւարարելով այդ խնդիրը, ի նշան Իմ անկեղծ երախտագիտութեան—ձեր՝ դէպի Գահը և Հայրենիքը ցոյց տուած ծառայութիւնների համար,—շնորհում եմ ձեզ Մեծ Իշխան Ալեքսանդր Նեվացու շքադրամ, որի նշանները ընդ սմին առաքվում են, մնում եմ առ ձեզ մշտապէս բարեհաճ

Իսկականի վրա Ն. Կ. Մ. Սեփական ձեռքով ստորագրված է

և անկեղծօրէն շնորհապարտ ՆԻԿՈԼԱՅ

Ցարսկոէ Սէլօ, 26 հոկտ. 1915 թ.։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

◆ Մայրաքաղաքի թերթերը լի են տեղեկութիւններով Պարսկաստանում տիրող յուզալի դրութեան մասին։

Պետրօգրադի պարսից դեսպան Իսահակխանը այցելել է արտաքին գործերի մինիստր Սազօնովին։ Այդ առիթով դիւանագիտական շրջաններում խօսվում է, որ, չը նայած Պարսկաստանի բոլոր հաւաստիացումներին բարեացակամ չէզոքութեան մասին, Պարսկաստանի դրութիւնը չափազանց լուրջ է։ Թոյլ կառավարութիւնն անզօր է մաքառել երկրում հետզհետէ աճող գերմանական ազդեցութեան դէմ։

◆ «Р. Сл.»-ն հաղորդում է, որ պարսից կառավարութիւնը ցանկութիւն է յայտնել լուրջ բանակցութիւնների ձեռնարկել Ռուսաստանի և Անգլիայի հետ և, ի նկատի ունենալով այդ բանակցութիւնների շատ լուրջ նշանակութիւնը, խնդրում է տալ առանձին լիազօրութիւններ ռուսաց և անգլիական դեսպաններին, որպէսզի բանակցութիւնները կատարվեն Թէհրանում։ Բանակցութիւնների պաշտօնական թեման մնում է անյայտ, սակայն մի քանի լուրջ հիմունքներ կան կարծելու, որ Պարսկաստանը բարձրացնում է վարձահատուցման հարց չէզոքութեան համար։ Ռուսաց և անգլիական կառավարութիւնները պատրաստ են լսել Պարսկաստանին և բաւարարել նրա հիմնական ցանկութիւնները, ընդունելով որ պարսից կառավարութիւնը, հաշւի առնելով բօպէի լրջութիւնը, հանդէս չի գայ բացարձակ անընդունելի պահանջներով, օրինակ առաջարկելով վերաքննել ռուս-անգլիական համաձայնութիւնը։

Հեռագրական հաղորդագրութիւնն որդէն յայտնեց Ռուսաստանի ուղարկած վերջնագրի մասին։

◆ Բեռլինում գերմանասէր Հուսէյն-Նօվզին պարսից դեսպան նշանակելու մէջ գերման ղեկավար շրջանները տեսնում են սերտ մերձեցում Պարսկաստանի կողմից դէպի Թիւրքիան և Գերմանիան։

◆ «Р. Сл.»-ի նոր տեղեկութեան համաձայն, Պարսկաստանը հեղեղվում է Թիւրքերով և գերմանացիներով։ Սկզբունքով վճռված է կազմակերպել մի մեծ զօրաբանակ, որի հրահանգիչները լինելու են Կ. Պօլսում կրթութիւն ստացած պարսիկ օֆիցերները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ԱՆՈՒՂՂԵԼԻ ԶՐՊԱՐՏԻՉՆԵՐԸ

Ամերիկայի դաշնակցական օրգան «Հայրենիքը», որի մի համարը ուղարկված է ինձ, ըստ դաշնակցական աւանդական սովորութեան, նորից մի զրպարտութիւն և ստախօսութիւն է յերիւրել, հաւատարիմ այն սկզբունքին, թէ ով հակառակորդ է դաշնակցական մաֆիային, նրան պիտի զրպարտել, չարախօսել։ Բացի դրանից, այդ թերթը այն ծրագրած կարծիքն ունի, թէ պէտք է օգնել միայն այն կամաւորական խմբերին, որոնք բաղկացած են միայն դաշնակցականներից։ Ես կարծում էի, թէ դա միայն իրա՝ «Հայրենիք» թերթի կարծիքն է, բայց դուրս է գալիս, որ նոյն կարծիքն ունի և կուսակցութեան ամերիկեան կենտ. կոմիտէտը, որ հարկ է համարել մի պաշտօնական (sic!) յայտարարութիւն տպել այդ թերթի մէջ, որի մէջ չէ խղճահարվել զրպարտութիւնը իր գլխաւոր զէնքը դարձնել, գրելով թէ «համաձայն մեր ստացած վաւերական տեղեկութեան՝ «Ազգային Պաշտպանութեան Ամերիկայի Յանձնախմբի» կողմէն հայ կամաւորներու համար Կաթողիկոսին ուղարկուած 23,000 ռուբլին ամիսներէ ի վեր կը մնայ «Մշակի» խմբագիր Հ. Առաքելեանի մօտ, առանց գործածուելու իր նպատակին...», և յետոյ՝ թէ իբր «Հայ կամաւորների անունով անխտիր ուղարկված գումարները յատկացվել են Հնչակեան կամաւորներին»։

Ցոյց տալու համար, թէ որքան ճշմարտութիւն կայ այս մեղադրանքի մէջ, ես առաջ կը բերեմ իսկութիւնը.

1) 1915 թ. յունիսի 6-ին ես ստացայ Էջմիածնի սինոդից 17,353 ր. 75 կ. մի գումար, յանձնելու օֆիցեր Զանփօլադեանի հրամանատարութեան ներքոյ գտնվող հայկական 6-րդ դրուժինային։ Սինոդը գրում է, որ այդ գումարը ուղարկել է «Ամերիկահայ Ազգային Պաշտպանութեան Յանձնախումբը» այն նպատակով, որ նա «գործածուի հնչակեան և ուրիշ ոչ-կուսակցական կամաւորներու համար»։

Նոյն օրն և եթ ես, համաձայն սինոդի այդ կարգադրութեան, յանձնել եմ ստացականով յիշեալ գումարը № դրուժինայի լիազօրներին։

2) Երկրորդ անգամ սինոդից ստացել եմ դարձեալ նոյն «Ամերիկահայ Ազգային Պաշտպանութեան Յանձնախմբից» ուղարկված, նոյն նպատակով, 11,305 ր., որպիսի գումարը դարձեալ նոյն օրը յանձնել եմ նոյն դրուժինայի լիազօրներին։

3) Երրորդ անգամ սեպտ. 30-ին դարձեալ սինոդից ստացել եմ 3350 ր. նոյն դրուժինային յանձնելու և յանձնել եմ նոյն օրը։

Հետևաբար, ես ստացել եմ սինոդի միջոցով 32008 ր. 75 կ. և ստանալու օրերին իսկ յանձնել եմ ըստ պատկանելւոյն։

Արդ, ինչպէս է թոյլ տալիս իրան Դաշնակցութեան կենտրոնական կոմիտէտը իր պաշտօնական (!) յայտարարութեան մէջ իսկ ստել, ասելով թէ «ամիսներից ի վեր» ես պահել եմ դրամները ինձ մօտ և անխտրաբար բոլոր հայ կամաւորների համար ուղարկված գումարները տուել եմ միայն հնչակեան կամաւորներին։

Ես հասկանում եմ, որ այս և այն դաշնակցական անհատը կարող է զրպարտել, ստախօսել, բայց մի կուսակցութիւն, եթէ նա մաֆիական չէ, եթէ նա յարգում է իր խօսքը և կնիքը, կարող է այդքան անամօթաբար սուտ խօսել, զրպարտել։ Ես չը գիտեմ՝ հայկական № դրուժինան բաղկացած է հնչակեաններից թէ այլ կամաւորներից, այլ ես գիտեմ, որ ինձ ուղարկված է գումար սինոդի միջոցով և պատուէրով՝ տալու № դրուժինային, և ես ամենայն սրբութեամբ անմիջապէս կատարել եմ այդ պատուէրը։

Այժմ իրաւունք չունե՞նք հարցնել Դաշն. կենտրոնական կոմիտէտին. միթէ ձեր բոլոր պաշտօնական յայտարարութիւններն էլ այդքան ճշմարտութիւն են պարունակում իրանց մէջ։ Հ. Առաքելեան

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԻՈՒԹԻՒՆ ԵՒՍ ՉՈՒՆԵՆՔ

> Խորապէս գարշելի է այն մարդը,
> որ կողոպտում է իր հօրն ու մօրը
> և դա յանցանք չէ համարում։
>
> Առակաց

Որ մենք՝ հայերս, որպէս ժողովուրդ և որպէս հաւաքական ոյժ, զուրկ ենք յատկութիւնների ամենալաւերից և ընտիրներից՝ քաղաքացիական արիութիւնից և պարզ գիտակցութիւնից, դա անհերքելի փաստ է և զուտ ճշմարտութիւն, և ով կամենում է տեսնել այդ փաստի արմատն ու ճշմարտութեան դէմքը, նա կարող է քրքրել հնագոյն պատմութիւնը և կարդալ նրա խորշերում պարսից Թագաւորի այս խօսքերը.

«Իմ զօրքի վատ մասը կազմում են ասորիները. մինչ հայերը ասորիներից վատթար են»...

Ի՞նչ փոփոխութիւն, սակայն, յընթացս հազարաւոր տարիների մաքառումի, հին հայերի և նոր հայերիս յիշատակված յատկութիւնների մէջ... դէպի լաւը։

Վերջին օրերի հայ լրագրութեան ուշիմ ընթերցողն այս հարցին ունի հետևեալ բացասական պատասխանը.

— Եւ ոչ մի...

Արդարև, ոչ մարդասէր քրիստոնէութիւնը և ոչ էլ դարիս լուսաւոր քաղաքակրթութիւնը դեռ չեն կարողացել մեզ սայթաքեցնել մեր ընդգրկած հնօրեայ ուղիից...

Եթէ պարսից այդ Թագաւորը օրեէ մէկ հրաշքով կարողանար կենդանանալ ու աչքի անց կացնել հայ պարբերական մամուլը, արմանքից ու զարմանքից չէր կշտանայ... մեր անշարժութեան վրա։

Նա կը տեսնէր, որ մենք նոյն վախկոտ ազգն ենք մնացել, ինչ էինք իր Թագաւորութեան օրերում. ոչ քաջութիւն ունենք երևոյթներն իրանց իսկական անուններով անուանելու և ոչ էլ քաղաքացիական արիութիւն՝ յանցաւորի անունը տալու...

Ու նա, ձեռքը դրած իր հանդիսատ խղճի վրա, կը բացագանչէր.

— Ես արդար եմ հայ ժողովրդին վատթար անուանելուս համար...

Որ, իրօք, մենք՝ հայերս հաւաքաբար զուրկ ենք քաղաքացիական արիութիւնից և պարզ գիտակցութիւնից, դրա փաստը երկու-երեք օր առաջ տուինք։

Հայ տառապեալ, անօթևան, անինչք, անհաց մնացած փախստականների համար գերագոյն ջանքերով ժողոված նպաստի մէջ անսիրտ և անհոգի զեղծումներ և վատնումներ են կատարվել, իսկ մենք քաջութիւն չունենք զեղծարարներին անուանելու և նրանց անարգանքի սիւնին բևեռելու...

Այսպիսով՝ ճզմվում է պատմութեան կնիքը... դրոշմված մեր հոգու վրա։

Երկարել այս մասին ոչ պատեհ է և ոչ էլ արժանի։

Մեր նպատակն է շեշտել, որ համընթաց դրան՝ դարձեալ հաւաքաբար՝ զուրկ ենք նաև... բարոյական արիութիւնից։

Ներկայ համաշխարհային պատերազմի հիւսուածքներում խճճված իւրաքանչիւր ազգ, մեծ կամ փոքր, յանուն իր ազգային ինքնուրոյնութեան յարատևութեան, ցուցադրել է իր հոգու ամենաընտիր կարողութիւններն ու յատկութիւնները։

Մինչդեռ մենք... հազար երանի կը լինէր, եթէ հարկադրված չը լինէինք խօսել մեր մասին։

Մենք դեռ ևս մեր յատկութիւնների և հոգեկան կարողութիւնների այն երեւան շրջանումն ենք, երբ մաքուր ձեռքերով և սառնասիրտ հոգով չենք կարողանում մօտենալ անգամ այն ողորմելի կոպէկներին, որոնք ունեն որոշակի նպատակ... սրբել գէթ ժամանակաւորապէս բիւր անբաղդ մերոյինների արցունքը։

Մեր թերթերն արձանագրում են երևոյթի ագեղութիւնը և... անցնում հերթական համարի։

Մեր բանիմաց դասը կարդում է և... միայն այդչափ։

Բաւականութեան ի՞նչ յոռի, այլանդակ եղանակ...

Ո՛չ, հասարակ վատնումն, ցարդ հասկացված զեղծումն չէ, որ կատարվել է հանրային մեր պարտականութեան մէջ...

Որակումի ի՞նչ մեղմ ձայն...

Կատարվել է ահաւոր և ցնցումներով լի մի բան. սոսկալիներից սոսկալին...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՍ ՍԸ՛Ի ԳԱՂԹԻ ՃԱՄԲԻՆ

Զուլում էր, զուլում... Զուլումի տարի էր։

Անօրէն սրի քաշեցին, խեղդեցին, առևանգեցին, այրեցին... Ողջ մնացածները թողին ամեն ինչ, մազապուրծ փախուստի ելան...

Նահանջ էլ կար. զօրքերը նահանջում էին. պէտք էր կեանքը գոնէ ազատել...

Եւ կազմվեց մի տխուր կարաւան. Թըշուառների անհարեկ կարաւան, բնավայրը քանդող, ամայացնող մի սև կարաւան...

Եւ գալիս էր յոգնած կարաւանը։

Տառապանք ու մահ շալակած՝ գալիս էր անյետադարձ, ետևը թողնելով կեանքի վերջին ապաւէնը...

Արտօն ու Մանիկն էլ, ծնողների ձեռքը բռնած, նրանց հետ էին։ Առաջից, ծարատի շարժումներով, անսավոր իր մէջքին դրած բեռան, պարանասանձ, զսպված փնչում էր Բօղօն, իրանց կովը։

Մի բարեկեցիկ ընտանիք էր սա։ Ամբողջ կարողութիւնից վերցրել էին այդ կովը և իր բեռը...

Խղճուկ բեռ։

Յուլիսեան կիզիչ արևը վսեմաբար բարձրացել էր Վարագի ժայռոտ կատարից և խոնարհվում էր դէպի Նեմրութ ու Գրգուռ։ Բզնունեաց ծովը ծիրանի հագած, ծըփուն ալիքների անխախտ ժպիտով հրաժեշտ էր կամում։ Արևմուտքում, Նեմրութ ու Գրգուռ սարերի կատարին բոցավառ արշալոյսի զո՛ռ ու վա՛ռ արիւն-գոյները բեհեզազարդ ալիքների հետ մի գեղատեսիլ, բայց խոր ու ահաւոր խա՛ղ էին կազմել։

Բնութեան քմահա՛ճ խաղ...

Արիւնանե՛րկ վերջալոյս...

Ծովային մեղմիկ զեփիւռը շոյում էր ու անցնում։

Փախուստի ելած անծայր կարաւանը սահում էր առաջ, այն ձորի միջով։ Բերկրիի ձորով...

Յանկարծ՝ բո՛մ, բո՛ց, տրա-տա-տա, թո՛մ, թրա՛խ...

— Փախէ՛ք, քիւրդերը, վա՛յ, իաման, քիւրդե՛րը...

Կայծակնահար եղած կարաւանը նօսրացաւ։

Շատերն ընկան այն ձորում... Բերկրիի ձորում։

Շատ նազելի գեղեցիկներ առևանգվեցին։

Արտօյի ու Մանիկի մայրն էլ նրանց մէջն էր։

Վերջալոյսը խամրեց հետզհետէ ու լուծվեց։ Գրգուռ սարը իր ետևն առաւ արևը։ Խաւարը փռել սկսեց իր սև թևերը։

Շփոթված կարաւանն իրար անցած թփըրտում էր խելակորոյս։

Սարսափից՝ հարազատներն իրար կորցրին։

Տառապանքի բեռան տակ յոգնած, մահվան ուրուականից հալածական, ամենքն իրանց սուղ կեանքն ազատելու ճիգն ունէին։

Եւ ոմանք դէպ առաջ, ոմանք՝ ետ ազատեցին իրանց կեանքը։

Փրկութիւնը ձորի ծայրերումն էր։ Մէջտեղը քիւրդի ձեռքով մահ էր սփռւում։ Անկուշտ մահ։

Մի պահ ձորն ամայացաւ։

Յանկարծահաս կարկուտի զոհերը մնացին միայն։

Շա՜տ էր նրանց թիւը։

Հետզհետէ խաւարը թանձրանում էր։

— Քէլի՛, Մանի՛կ, քէլի՛, էրթանք էստեղից...,—երկու ստուերներից մէկը յանդգնեց ահաւոր ձորի ծանր լռութիւնը խախտել։

— Հա՛, հա՛, քէլի՛, Արտօ՛, ընցնենք էստեղից, բա՛, հայրիկն ծուր է, կը վախենամ. դու չե՞ս վախենայ, Արտօ՛. մայրի՛կ, հը՛, հը՛, մայրի՛կ. հը՛, դօր եա. արի՛ի՛...—հեկեկում է հինգ տարեկան փոքրիկը։

Եւ դողում էին նրանք, և վախենում ու լալիս։

Գիշերվայ խաւարում երկու նոր որբուցածներ էին նրանք, ձորում մնացած։

Լուռ էր սարսափի ու մահվան ձորը։

Մի սև ժայռի տակ, երեւակայական դիւային ստուերներով շրջապատված, մահի դողը սրտներում, կանգնած էին վաղուց և դեռ սիրտ չէին անում շարժվել առաջ։

Յանկարծակի եկած, շշմել էին և չէին հասկանում, թէ ինչ էր, որ կատարվեց քիչ առաջ, երեկոյեան, և ինչ պիտի անել հիմա։

— Արտօ՛, կը վախենամ, տես, էնտեղ կայներ է մէկը. աչքերը բաց, բաց, կլրիշկայ մի. վայ, էլաւ կուգիյայ. կը վախենամ. վա՛յ, մարէ, մայրի՛կ...

Եւ պինդ հպեց Մանիկը եղբօր կողքին։

— Սուս, Մանիկ, էնտեղ զմա չը կայ. քե էնպէս կերևայ, ինոնք մեռելներ են, սաղ մնացածները գնացին, փախան էստեղ, էնտեղ. մենք ենք մնացէ մենակ. սուս, սիրտդ կայիմ պահի. մըկայ կերթանք հայրիկին կը կնանենք. դէ սուս, մի լայ,—սիրտ էր տալիս Արտօն, որ երեք տարով մեծ էր Մանիկից. բայց խաւարը ծածկում էր քրօջից նրա այլայլված, անհարեկ դէմքը։

Գիշերվայ մի ժամին երկու փոքրիկները սիրտ արին շարժվել դէպի առաջ։ Ծնողներին գտնելու մեծ յոյսը առաջ էր մղում նրանց։

Եւ երկչոտ քայլում էին նրանք։

Չարախինդ մահը՝ մանգաղն ուսին՝ հետևում էր նրանց։

Աջ ու ձախ, առաջ ու ետ, այն ձորի մէջ ամեն թփի տակ, ժայռերի արանքում, գետի եզրին, թումբերի առաջ... դիակներ էին, մեծի ու փոքրի...

Մի թումբի առաջ կանգ առան յոգնած։

— Արտօ, չեմ կանայ քալէ. ոտներս կը ցաւայ, քիչ մը նստենք էստեղ, անօթի՛ եմ, հաց կա՞յ։

— Չէ, Մանիկ. ձեռդ տուր ինձ. քիչ մ'էլ էրթանք. էս թումբն էլ ընցնենք, բալքի խանինք. ախր հայրիկին պիտի կնանենք, չէ, Բօղօյին էլ, մայրիկին էլ. քիչ էլ, ընը, խասանք։ Բօղօյին որ խասնինք, խացը կը խանենք ու կուտենք... չէ, Մանօ։

Ու ձեռքից բռնած քայլ արին թռչելու թումբի միւս կողմը։

Ոտքը դէմ ընկաւ և Արտօն երեսն ի վայր փռվեց գետնին. ճակատը դիպաւ մի տափօրինակ իրի։

Գլուխը բարձրացրեց, հասկանալու թէ ինչ էր։ Խաւարի մէջ, թումբի միւս երեսը, ուրուագծվեց մի դիակ, դեռ չը սառած թարմ արեան ճապաղիքի մէջ, հոգեվարքի վերջին շնչում։ Սոսկումով վեր թռաւ և ուզեց կօշիկները հագնել ու հեռանալ, բայց խաւարի մէջ երկու ձեռքեր բարձրացան ու գրկեցին նրան։

— Բալա՛ս, Արտօ՛, եկա՞ք... ա՛խ իմ խեղճ ձագերս...,—լսվեց խաւարում։

Ու վերջացաւ ամեն ինչ։

— Հայրի՛կ...

Սարսափած երեխան խաւարում նշմարեց մեռնողին, որ վերջին անգամ թփրտաց ու հանգաւ։

— Հայրի՛կ,—ճչաց նա նորից ու նուաղեց։

Մանիկը, որ քիչ հեռու բռնավել էր, անշարժ մնացել, չը հասկանալով ոչինչ ճիչի սարսափի տակ, ընկաւ եղբօր կողքին, որ տառապող դիակի գլուխը գրկած՝ մնջել էր...

Մի պահ լռեց ամեն ինչ։

Գետակն էր տխուր վուշ-վուշ անցնում։ Խորհրդաւոր վուշ-վուշ...

— Մանի՛կ, տես հայրիկը,—լսվեց քիչ յետոյ մի ճիչ՝ մենութեան մէջ։

«Հայրի՛կ»,—կրկնվեց ձորում արձագանքը մի քանի անգամ։

— Հայրի՛կը,—թոթովեց Մանիկը,—ծուր է հայրիկը։

Ու ընկան անշունչ դիակի վրա...

Երկու ստուերները խաւարում, գրկած հօր դիակը, հալւ եկան, մնացին։

Մի բու վայից մօտիկ ժայռի վրայից. չարագոյժ «վայը» արձագանքից ձորը քանիցս։

— Հայրի՛կ, կը վախենանք է, ելի՛, ելի՛, հայրի՛կ...

Դիակը անշարժ էր ու անտարբեր։

Ու կծկվեցին, սեղմվեցին, դիակից պաշտպանութիւն գտնելու։

Կէս գիշերը անցել էր։

Այն թումբի տակ, երկու ստուերները լուռ փորում էին հողը մատներով։ Երևի գերեզման հայրիկի համար։

Եւ փորում էին արիւնոտ հողը, վախով ու դողով, կսկիծն ու ահը մանուկ սրտերում։ Փորում դիակի արիւնով յագեցած կարմիր հողը։

Ձորում ոռնոցներ ու քաշկռտուքներ կային. ոսկորների խշրտոց էր լսվում։

Գայլեր էին։ Դիակներ էին յօշոտում։

— Արտօ՛, էլ չեմ կանայ փորի, եղունկներս արնուկ ի, չեմ կանայ, կը ցաւայ...

Ու շրթունքները խոժոռվեցին, մանկական զուլալ աչքերից արցունքի մի զոյգ յաւելեալ կաթիլներ եւս կախվեցին և գլորվեցին ընկան արիւնոտ փոսի մէջ։

Չոր հողը սակայն չը փափկեց։

Լուսանում էր։

Ետ փախած, ջախջախ կարաւանի ծայրը նորից մտաւ ձորը. վտանգը անցել էր կարծես։

Ու կրկին գալիս-անցնում էին անընդհատ թշուառները. շարան-շարան, ձորը լեցուն, անզգայացած ու անտարբեր դէպի ընկերը, դէպի շրջապատը, գետնին ընկած, յոգնած ընկերը, անտէր թողած, նուաղած, յոգնած մանուկները, դէպի դիակն ու կենդանին...

Շատերը տեսան այն թումբի տակ հողէ կոյտի մօտ շարժվողներին, բայց անցան։

Ո՞ւմ փոյթը, ով է, ինչ են անում...

Պէտք էր արիւն բուրող ձորը շուտով կտրել-անցնել։

Եւ գալիս էին անվերջ, աղջամուղջային

Կողոպտված են ցամաք հացի կարօտ հայ փախստականները...

Թալանված են մերկ ու բոկոտն մեր հայրերն ու մայրերը, իրանց ամուսնական տաք և խաղաղ առագաստից հալածական մեր եղբայրներն ու քոյրերը։

Հայ անտուն, անտէր, որբ մանկտին է աւարի ենթարկված...

Մենք անհունս գարշելի ենք և... զուրկ բարոյական արիութիւնից։

Ո՞վ ճանաչում է անմաքուր ձեռքերի տէրերին և տգեղ քայլի հերոսներին, պարտաւոր է հանրութեան դատարանին յանձնել նրանց անունները...

Հասարակութիւնը պէտք է կարդայ այդ անունները...

Մաքուր ձեռքերը պէտք է զատվեն արատաւոր ձեռքերից...

Վեհ մարդասիրութեան ակտը պէտք է զանազանվի անխառն աւազակութիւնից...

Որպէսզի անօրինակ և քստմնելի երեւոյթը չընդհանրանայ ու անջնջելի կերպով դրոշմվի հաւաքական հայութեան ճակատին։

Պէտք է վանել անողոք պատմութեան այն վայրկեանը, երբ հայութիւնը կարող է հռչակվել նաև... բարոյական արիութիւնից զուրկ ազգ։

Ահա թէ համաշխարհային հոյակապ դէպքերի տարուց աւելի տարեգրութեան մէջ ի՞նչ վայրագ յատկութիւններով ենք հանդէս գալիս...

Հարկ կա՞յ միթէ հարցնելու, թէ կեղտոտ բեռով ծանրաբեռնված հոգով առաջ գնալով՝ ուր ենք ուզում հասնել...

Գրօզնի Միսակ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՎԻՃԱԿ

I

«Մինչ իմ որդիք, ո՜վ գլուխ,
Ծարաւ, նօթի, անտէրունչ,
Օտար աշխարհ յածում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ»...

«[illegible]»...

Դաժան ձմեռն արդէն ցոյց է տուել անհրապոյր դէմքը։ Շրջակայ լեռների լանջերը ծածկված են առաջին ձիւնի հաստ սաւանով։

Սկսվել են աշնանային մառյլ ու տխուր օրերը։ Փչում է ղառնաշունչ քամին։ Խոնաւ է ու ցուրտ։ Մարդիկ պատրաստվում են դիմաւորելու անկոչ հիւրին և պաշտպանվելու նրա անողոք արհաւիրքներից...

Իսկ այդ միջոցին, հրից ու սրից ազատված փախստականների կացութիւնն օր ըստ օրէ դառնում է աւելի դժնդակ, աւելի օրհասական... Ամենքի դէմքերը դալկահար ու յուսահատ, տանջալից ու ողբալի...

Այդ կմախքացած էակները գալարվում են ցաւերի ճանկերում, կիսամերկ, «նօթի, ծարաւ, անտէրունչ, օտար աշխարհ յածում են թոյլ ոտքերով կիսաշունչ»...

Հայաստանի «անտէրունչ զաւակները» թափառած են գիւղերի «բնակարան» համարվող կիսաւերջերում, խարխուլ հիւղերում, որոնցից մէկը դուռ կամ պատուհան չունի, միւսի առաստաղն է փլած, երրորդի պատերն են ճեղքված և վերջապէս չորրորդը անչափ խոնաւ է ու ցուրտ...

Ահա այս տեղերումն են կծկվել աւերակ Հայաստանի վերջին բեկորները... Այսպիսի աննպաստ միջավայրումն է նրանց վիճակված տանել և ցուրտ, և ցաւ, և քաղց, և մերկութիւն և անհամար դառնութիւններ...

Ցրտաշունչ ձմեռն արդէն նախազգացնել է տալիս իր մօտալուտ գալուստը, այնքան աւելի սոսկալի է դառնում հայրենազուրկ և անպաշտպան մասսային սպառնացող վտանգը։

Նախկին հիւրասէր ու լիառատ գիւղը ներկայ պայմաններում աստիճանաբար կորցրել է իր պարտաճանաչութեան ու ազգասիրական բիւրեղման զգացմունքի նախկին չափն ու թափը...

Մեր սրտաբաց գիւղացիութիւնը համակործան փոթորկից սարսափահար՝ անզգայացել, կորցրել է առաջվայ հաշտ բնաւորութիւնը, խաղաղ վարվեցողութիւնը և «հելլա» գնալու տրամադրութիւնը։

Գիւղում կարծես անհետանում է գթութեան ու ողորմածութեան ոգին... Ջնջվում, հալվում է եղբայրական հիւրընկալութիւնը և անկեղծ վերաբերմունքը։

Գիւղացիութիւնը՝ անտեսական երկարատև տագնապից հիւծված ու յուսախաբ լինելով՝ ջղայնացել, անհիւրասէր ու անողորմ է դարձել։

Ունեւոր գեղջուկի սիրտը քարացել, խիղճը սառել, մարդասիրական զգացմունքը զոլորշիացել է։

Մի ծանօթ զգայուն գիւղացի ցաւօտ տոնով խոստովանվում է.

— Մենք, ասնջպար Թախսումս, կատարեալ փոխվել, անճանաչելի ենք դառել։ Մեր սիրտը պնդացրել, ժէո քար ենք դարձրել, մեր ֆօգուց ձեռ ենք վեկալել. երկնաւորի առաջ սև երես կանգնել, պղծացել ենք։ Էս մեր անարդար վարմունքի համար շատ-շատերը մեզ փնովելու են, շատերն երեսներովս են տալու, համա դուզ որ խօսանք, արդար որ դատենք մեր գիւղական ռահաթին էս ռահաթիս սաղ տեղ հէչ չի մնացել, ղուաթներս հատել, ղուաթումներս կտրել ա.... Գեղում ոչ կարգին մարդ ա բնում, ոչ էլ կարողութիւն։ Մեզանում եղածը քամու ա տրվել, ցրվել-մաշվել ա.... Հօրերը բացաբերան, ամբարները դատարկ, մառանները փլէկ, ախոռներ բրիշակ. էտուր համար էլ սրտներս նեղ, խղճներս մեռած... Դուզ որ խօսանք, դրուստ որ ասենք, կարալ չենք, էլ ուժերս պատում չի էս անճար, անվաթան փախստականներին առաջվայ նման պահենք, գլխներովը պտիտ գանք, մեր ունեցածով նրանց եօլա տանենք ու սաղ-սալամաթ գարնան հասցնենք... Ասած է, որ խալխի համար լաց ըլողը՝ կը քոռանայ, համա ինչ արած, որ մեր աչքի լոյսը վաղուց ա պարպել...

Այս ամենը խորին տխրութեամբ արտասանում է մի մարդ, որ մինչև օրս գաղթականական գործում ցոյց է տուել անչափ եռանդ, զոհաբերելու տրամադրութիւն և անսահման բարեսրտութիւն...

Բայց իրական կեանքի ներկայ ծանր պայմանները նրան կերպարանափոխել՝ ծայրագին սկեպտիկ են դարձրել...

Պակաս ողբալի վիճակում չեն գտնվում թշուառ գաղթականների ողորմելի անասունները։

Ջէ որ նրանք էլ շունչ-կենդանի են, նրանք էլ կերակրվելու, խնամվելու և պատսպարվելու բնական պահանջ են զգում։

Այցելածս չորս գիւղերի 340 փախստականները զուլումի աշխարհից կարողացել են ազատել միայն հարիւր անասուն, բոլորն էլ ցաւագար ու նիհար, կմախքացած ու հիւծված, սոված ու կուչ եկած։

Հիւրընկալ գիւղերն իրանց ունեցած մի քանի պոչատ անասուններին հազիւ-հազ կարող են պահել, կերակրել, միսը մաշելով՝ չոր ոսկորները հասցնել գարնանը... Խեղճ ու կրակ գաղթականի վտիտ կովին կամ եզին կարող է բաժին հանել, սովամահութիւնից փրկել...

Մինչդեռ գաւառական կոմիտէն այս ցաւոտ երեւոյթը մեղմելու համար ձեռի տակ չէ ունեցել արմատական ոչ մի միջոց... Չը նայած, համարեա իւրաքանչիւր օր, զանազան գիւղերում, նոյն հողի վրա ստեղծվում են փախստականի ու տեղացու միջև տարաձայնութիւն, դժգոհութիւն, վէճ և նոյն իսկ կռիւներ...

Գաղթականական կոմիտէն այսպիսի դէպքերում, ի մխիթարութիւն գանգատաւոր փախստականի, յանձնարարում է իր շրջիկ լիազօրին «շտապել այս կամ այն գիւղը բարոյապէս ազդել գիւղացիութեան վրա, որ կերակրեն, պահեն բնաւեր գաղթականի կովին կամ օչխարին»...

Դրանից աւելի ինչ կարող է անել հայկական մի իրաւազուրկ մարմին, որի գործունէութեան իրաւական նորմանները չեն անցնում «բարոյական ազդեցութեան» նեղ շրջանից։

Ինչպէս տեսնում ենք, ցաւը խորն է ու ընդհանուր, իսկ անմիջական լուծումը՝ պալիատիւներով՝ անհնարին...

Մէջտեղ ո՞վ է չարաչար տուժում... Անշուշտ թշուառ փախստականը և նրա խղճալի՜ անասունը...

Բայց այդ ողբերգութեան մի ակտն է...

Մ ե ծ-Ղ ա ր ա ք ի լ ի ս ա Репортеръ

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ-ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Մայր Հայաստանում բնակաւորված, հայը հայրենիքում յաղթական մահով նահատակված և սարսափահար նրա այրին դեռ մայր չեղած՝ արգանդի պտուղն առած մեզ մօտ փախուստ եկած նորածիլ՝ Հայաստանի արշալոյս բեկորիկի՝ այս հրատապ նորածին մասկան հանդիսաւոր մկրտութիւնը կը կայանայ կիրակի, նոյեմբերի 1-ին, ցերեկվայ ժամը 1-ին Հայաստանի բեկորների մեր ապաստարանում «Ակումբում» այգում։ Այդ միևնոյն տեղը և ժամին կը կայանայ և ողբուաշէն հրատապ ձմեռային ապաստարանի օրհնութիւնն ու բացումը։

Ստացված են նուէրներ.

Իրերով՝

Օր. Գայիանէ Տէր-Պետրոսեանից մի աչխար և 10 ֆ. բրինձ իր հանգուցեալ եղբայր Իվան Տէր-Պետրոսեանի յիշատակին։ Արմենուհի Գալիկեանից 5 ֆ. բրինձ, $^1/_2$ ֆ. թէյ։ Բալախանեց հ. Ղազարոս քահանայ Ցովսէփեանից 14 կտոր հագուստներ մանուկների համար։

Դրամով՝

Խուս գերասանուհի տ. Բուտկևիչից 10 ր., որ անձամբ այցելեց ապաստարանը և արտասուքը աչքերին իր՝ անկարող եղաւ զսպել իրան, վշտակցութիւնն ու կարեկցութիւնը արտայայտելիս։ Օր. Կատարինէ Օրբելիի ձեռքով Ստեփան Պավլովիչ Սեբերաբեկեանից 25 ր., Սամսոն Ջէրջէզեանից 25 ր., մի ոմից 2 ր., Վարդանէ Ս. Սօլովեանից 1 ր., հ. Սահակ քահ. Սահակեանի միջոցով 16 ր. 28 կ., Մանուկ Մ. Աւագեանի Սրբուհի դստեր մկրտութեան ճաշկերոյթին Եղիշէ Օլմեանի առաջարկութեամբ մի խումբ սեղանակիցներից. Ախալքալաքից (Գօրու գաւառ) հ. տէր-Թաթուլեան քահ. Միրիմանեանի միջոցով Բողդան և Կատարինէ ամուսիններից և Գ. Մարաքեանից 25 ր., ի յիշատակ հանգուցեալ Լուսիկ Բուլոյեանի։

«Մշակի» միջոցով՝

Տիկ. Մարիամ Կաֆեանից 15 ր. ի յիշատակ նորերս Սմոլենսկում վախճանված Նիկոլայ Բահաթրեանի (Ղարաբաղում յայտնի գործիչ հանգուցեալ մանկավարժ Առաքել Բահաթրեանի եղբայր), Ալաւկայից՝ Ցակոբ Ցովհաննեանից 15 ր., Վլադիկավկազից՝ Վ. Բուղաղեանից 5 ռուբլի։

Տ. Նազարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Քահանայական հարց

Աստրախան, 16 հոկտ.

Աստրախանում օրվայ հրատապ հարցերից մէկն է հանգուցեալ Մկրտումեան քահանայի տեղ նոր քահանայ ընտրելը։

Մկրտումեան քահանայի մահվան տարին շուտով կը լրանայ։ Կոնսիստորը, ի նկատի առնելով որ Աստրախանի 10 քահանաներից այսօր մնացել են միայն 6-ը, կարգադրել է Մկրտումեանի ծխի համար ընտրութիւն կայացնել։

Ի զարմանս կոնսիստորի և ընտրող ժողովրդի, հրապարակի վրա չը կան թեկնածուներ ոչ դրսից և ոչ էլ Աստրախանից։

Փաստն այն է, որ Մխիթար եպ.-ը հրաւիրելով իր մօտ մի քանի ազդեցիկ ծխականների ու խօսողների՝ վերջիններիս խնդրել ու համոզել է՝ այդ ծխի համար ընտրել Պօղոս քահ. Մալախանեանին, կոնսիստորի էկզէկուտորին, որն անծուխ քահանայ է, ս. Կատարինէ եկեղեցու ժամասաց, Գրօզնայի նախկին քահանան, հին տիպի ու անցէնց մի եկեղեցական, հետևաբար և, ըստ մեզ, Մկրտումեան քահանայի աթոռի համար անյարմար։

Օրերս, երեք օրվայ մէջ, մեռաւ ս. Պօղոս-Պետրոս եկեղեցու միաբան Խաչատուր ք. Կոտոյեանը, կոնսիստորի հին անդամն ու գանձապահը։

Ինչպէս պատմում են, հանգուցեալը թողել է 70,000 ր. կարողութիւն։ Նա 23 տարի քահանայագործել է։

Թարմ այժ

Համակրելի գործունէութիւն

Նոր-Բայազէտ, 20 հոկտ.

Տեղիս բարձր տարրական դպրոցի վարչութիւնը մի համակրելի գործ է սկսել Համաձայն դպրոցական բարձր իշխանութեան կարգադրութեան, նա հաւաքել է պահեստի զինուորների երեխաներին և ձրի ուսում տալիս, մատակարարելով նաև ուսումնարանական պիտոյքներ նրանց։ Ռուսաց բոլոր դպրոցների ուսուցչական խումբերը, բացի իրանց անմիջական պարտականութիւններից, ճաշերից յետոյ սիրով պարապում են այդ թշուառ երեխաների հետ, որոնք՝ տղայ և աղջիկ՝ յաճախում են դպրոց։

Սրտանց համակրելով այդ սուրբ գործը, մաղթենք, որ ձեռնհաս անձինք էլ աւելի սրտով ցոյց տային իրանց բարոյական և նիւթական աջակցութիւնը մեր ժողովրդին։

Գ. Սիմոնեան

Թանգութիւն

Ղալաչա, 8 հոկտեմբերի

Թանգ է այն՝ ինչ չը կայ, թանգ է և այն՝ ինչ կայ. թանգութիւնը մօտ է դարձել. ամենասովորականը, որ հեռու տեղերից չի ներմուծվում, այլ հէնց իրանց մէջ է, այդ էլ թանգ է։ Քաղաքներում, որտեղ հսկող մարմիններ կան այնքան էլ չեն կարողանում հարստահարել, կեղեքել. իսկ գիւղը անկոնտրոլ երկիր է, ինչ ուզում են՝ այն էլ անում են... Թանգ է և թանգանում է ցորենը, որի թաղարը յունիսին 25 ր. էր, յուլիսի վերջերը 12 ր. 50 կ. դարձաւ, այժմ 18 ր. է հասել. ցորեն չը կայ համարեա ամբողջ գաւառում. կան գիւղեր, որ մի քանի ամսվայ կը լինի, կան գիւղեր, որ բոլորովին չը կայ։

Ցօրանէր

Նորութիւններ Մեղրիից

Մեղրի, 15 հոկտեմբերի

Օգոստոսի վերջից մինչև սեպտեմբերի 19-ը միատեսակ հիւանդութիւնով—լուծ, փսխում—վարակվեցին շատերը։ Նրանք, որոնք ուժեղ էին, ամոքվեցին, իսկ թոյլերը մահացան, այնպէս որ այդ ժամանակամիջոցում մեռան 8 հոգի՝ 2 երեխայ, 3 կին և 3 տղամարդ։ Իսկոյն հեռագրվեց ուր հարկն է, և շուտով բացվեց ժամանակաւոր՝ գիւղիս ֆելդշերական կայանը. եկաւ և գաւառական բժիշկ պ. Պարոնեանը։ Նրա գալուց միայն մի հիւանդ կար, որի արտաթորութիւնից և գիւղի ստորերկրեայ աղբիւրի ջրից ուղարկեցին Թիֆլիս՝ բակտերիօլոգիական քննութեան ենթարկելու։ Մինչ այդ զգուշացվեց ժողովրդին հիւանդներին այցի չը գնալ, հիւանդացածների, մեռածների բնակարանները ախտահանութեան ենթարկեցին և հնարաւոր մաքրութեան հետևեցին, նրա հետ և պահեցողութեան։ Այդպիսով էլ հիւանդութիւնը կանգ առաւ և վարակը տեղն ու տեղը խեղդվեց սաղմի մէջ։

Մեղրին, իր շրջակայ գիւղերով, սովի տանող թանգութեան նախօրեակումն է ապրում։ Բամբակի բերքը շատ վատ է, միրգ, խաղող չը կար, իսկ սար գիւղացիները հարիւր խուրձից մի պուդ ցորեն հազիւ ստացան. շատ ու քիչ հունձ տուել է գարնանացանը, որ շատ քիչ էր արված։ Ներկայ աշնանացանը ուշանում է, որովհետև մեզ մօտ երաշտ է, և գիւղացին սերմացու չունի, իսկ շատերը, փոխ առածները տալով, նոյն իսկ ուտելու հաց չունեն։ Կշտի տակ ցորեն չէ գալիս, այլ ալիւր, այն էլ ցածր տեսակի, և ծախվում է 3 ր. 60—70 կոպէկով. Մնացեալ՝ քաղաքներից ներմուծվող ապրանքների մասին գրի առնելն աւելորդ է։ Միակ փրկութեան նաւակը ներկայանում է Մեղրիի սպառողական ընկերութիւնը, որին տարաբաղդաբար ժողովուրդը սառնութեամբ է վերաբերվում։ Ցանկալի է, որ մեր պանդուխտ հարուստ մեղրեցիներն օգնութեան գային գիւղի աղքատ դասակարգին սպառողական ընկերութեան միջոցով։ Մեր կողմերում դրութիւնը էլ աւելի է բարդանալու, մանաւանդ որ երկաթուղին մեզանից շատ է հեռու և սայլի ճանապարհներ չը կան։

Ե. Վարդանեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

ԼԵՆՔՕՐԱՆԻ ԳԱՒԱՌԻ ԹՈՒՐՔԵՐԻ ԳՈՐԾԸ

Բագւում քննվեց Լենքօրանի գաւառի 22 թուրքի գործը։ Նրանք մեղադրվում էին սարաժնիկների վրա զինված յարձակում գործելու մէջ, որ արին կողոպտելու նպատակով։

Գործի հանգամանքները սրանք են։

1914 թ. վերջում, երբ թիւրքաց զօրքերը շատ տեղերում անցան մեր պետական սահմանները և խախտելով Պարսկաստանի չէզոքութիւնը՝ խուժեցին պարսից մեզ սահմանակից շրջանները, Կովկասի մուսուլման ազգաբնակութեան մէջ սկսեցին շրջել ամեն տեսակ յուզիչ լուրեր, և մութ մարդիկ աշխատեցին բորբոքել թուրք ազգաբնակութեան համակրանքն առ Թիւրքիան կրօնական հողի վրայ։

Դեկտեմբերի 31-ին Լենքօրանի գաւառապետը, բարոն Տիզենհաուզէնը, տեղեկութիւն ստացաւ գաւառի 2-դ մասի սահմանապահ զօրախմբի հրամանատար փոխգնդապետ Եվլենևկէից, թէ գաւառի սահմանապահ պահակները վերացվում են։ Նոյն օրը գաւառապետը յայտնեց Զուգրիդի պրիստաւին, որ սահմանապահ պահակախումբը պէտք է հեռացնել Եարդըմլի գիւղից, որը գտնվում է պարսից սահմանից 10 վերստի վրա։ Այս հրամանը իր ժամանակին չի արվում յիշեալ պահակակայանի սարաժնիկներին և միայն 1915 թ. յունվարի 5-ին սարաժնիկներ Վասիլի Աքսենով (ուրեադնիկի պաշտօնակատար), Սեմեօն Սավին, Եգոր Կարախտանով և Մահմէդ Մուսայեվ, որ հաւաքում է տուգանքները Պարնայմի համայնքից, պատահաբար իմանում են տեղական բնակիչներից, որ սահմանապահ պահակակայանները վերցված են։ Նրանք անմիջապէս դադարեցնում են անտառային տուգանքների հաւաքումը և գնում Լերիկ գիւղը, պրիստաւից կարգադրութիւններ ստանալու։ Այնտեղ նրանք իմանում են, որ պրիստաւ Ֆէօդորովը սարաժնիկների հետ մեկնել է Լենքօրան։ Այդ ժամանակ նրանք էլ որոշում են, հաւաքելով դոկումենտները և արքունական ու սեփական գոյքը, նոյնպէս մեկնել Լենքօրան։

Բայց մինչև Եարդըմլի գիւղը հասնելը և ձիերից իջնելը նրանք նկատում են, որ մօտ 50 հոգի զինված թուրքեր գալիս են դէպի իրանց։ Աւագ սարաժնիկն իսկոյն կարգադրում է ձի նստել, և սարաժնիկներ Սավինի ու Կարախտանովի հետ դիմում են Բօզագերան գիւղը։ Ամբոխը նրանց ետևից կրակ է արձակում. նրանք իրանց հերթին պատասխանում են։ Ինչ վերաբերում է սարաժնիկ Մուսայեվին, նա մի րօպէ դանդաղում է և չի աջողում իսկոյն ձի նստել. մինչ այդ նրա վրա յարձակվում է տանտէրը՝ Աղաշ Ալի-օղլին, սրա եղբայրը Միթիզ Ալի-օղլին և երկու անյայտ մարդիկ և սկսում հրացանը խլել ձեռքից։ Այդ պայքարի ժամանակ, նրանից խլում են փամփշտակալը, գրպանից հանում են թղթադրամակալը 50 րուբլով և սենեակ ձգելով այնքան են ծեծում, որ նա ընկնում է ուշագնաց դրութեան մէջ։

Փոքր ժամանակից յետոյ այդ գիւղն է գալիս Կիւրեսադի գիւղի տանուտէր Ջալիլ Քէրբալայ Աբազ-օղլին, գզիր Սայիբի հետ, որոնք Եարդըմլի գիւղի մօտ լինելով՝ լսում են հրացանի ձայներ, գնում են պահակակայանի մօտ և այնտեղ տեսնում են մեծ [illegible] ամբոխ։ Լսելով սարաժնիկի [illegible] թեան մասին, այս տանուտէրը դիմում է խորամանկութեան, ասելով թէ գաւառապետը գալիս է։ Այդ լսելով՝ սարաժնիկին արձակում են և մի մարդու հետ ճանապարհ դնում դէպի Լենքօրան։

Այլ վիճակի են ենթարկվում միւս սարաժնիկները։ Դիմելով դէպի Բօզագերան գիւղը, նրանք հանդիպում են զինված թուրք ամբոխին, որոնք համազարկ են բացում նրանց վրա։ Նրանք փախչում են ճանապարհը և գնում դէպի Կիւրեսադի գիւղը, յոյս ունենալով օգնութիւն գտնել այնտեղի տանուտէրի մօտ։ Բայց որովհետև այդ գիւղի ճամբան վատ է լինում, նրանք ստիպված են լինում իջնել ձիերից և գնալ ոտքով։ Այդ գիւղին չը հասած, նրանք հանդիպում են զինված թուրքերի նոր ամբոխի, որոնք դարձեալ կրակ են բացում նրանց վրա։ Այդ ժամանակ նրանք որոշում են գնալ Դարեավար գիւղը, բայց այստեղ էլ նրանք անաջողութեան են հանդիպում։ Գիւղի վերևից երևում են ինչ-որ թուրքեր և սկսում են կրակել։

Ամեն կողմից շրջապատված լինելով, սարաժնիկները կանգ են առնում ձորի մէջ և թփերում թաքնվելով պատասխանում են իրանց վրա արձակվող հրացաններին, բայց անհաւասար դիրքի պատճառով նրանց գնդակները ոչ ոքի չեն կպչում և իրանք էլ չեն վիրաւորվում։ Նրանց գնդակները հատնում են շուտով։ Այդ նկատելով, 20 թուրք մօտենում են նրանց, զինաթափ անում, խլում նրանցից ամեն ինչ, երեք սարաժնիկներին թողնելով միմիայն ներքնազգեստներով ու բոբիկ։ Այստեղ հաւաքվում է փայտերով զինված մի հսկայ ամբոխ, մօտ 200 մարդ, շրջակայ գիւղերից։ Նրանց մէջ լինում են կանայք և երեխաներ։ Դրանք սկսում են քննել այն հարցը, թէ ինչ անեն՝ սարաժնիկներին։ Նրանք առաջարկել են սպանել, և մի տղայ, Կարաշ-Մեհտի-օղլի, այն է կամենում էր կացինը վրա բերել Աքսենովի և Կարախտանովի գլխին, եղբայրը չէ թողնում։ Վերջ ի վերջոյ ամբոխը որոշում է սարաժնիկներին չը սպանել։

Թուրքերից մէկը նստում է Աքսենովի մէջքին և հրամայում նրան, հրացանի կոթով խփելով, տանել իրան գետը։ Այդ նոյն թուրքը ասում է, թէ այժմ էլ ռուսաց թագաւոր չը կայ, այլ կան պարսից և թիւրքաց թագաւորներ, և այդ ասելով թագաւոր Կայսրին հայհոյում է փողոցային խօսքերով։ Վերջապէս սարաժնիկները մի կերպ խնդրելով կարողանում են ազատվել և գնալ Բելենի գիւղը, ուր և տանուտէրի տանը գիշերում են։

Այստեղից նրանք վերջապէս, մի կերպ շորեր գտնելով ու հագնելով, գնում են Լենքօրան։

Թուրքերը սրանցից խլում են 1000 ր. աւելի արքունական դրամ, 4 ձի թամբերով, 4 հրացան, 4 թուր և զանազան հագուստեղէն ու իրեր։

Մեղադրեալներն իրանց մեղաւոր չէին ճանաչում։ Մեղադրվողներից մի քանիսը դեռ գտնված չեն։

Գործի քննութեան համար կանչված էին 95 վկաներ։

Բոլոր մեղադրեալներին հարցաքննելուց յետոյ, դատարանը արձակեց այս դատավճիռը, որ արդէն ծանօթ է մեր ընթերցողներին, այն է՝ 7-ին դատապարտեց մահվան կախաղանի միջոցով, իսկ 6-ին արդարացրեց։ («Баку»)

լսւում, զունդ-զունդ ու անցնում փախչող կարաւանի հանգոյցները։

Ընդհատ խօսքեր, աղմուկ ու ճիչ, ախ ու հառաչանք. յոգնած, նուաղկոտ հեքերը ձորը բռնել էին։

Տառապանքի խուճապը լռեցել էր Բերկրու ձորում, անէծքի ձորում։

Արեւելքը շառագունել սկսեց։

Արշալոյսն էլ երէկվայ վերջալոյսի նման արիւնոտ էր։

Քոյր ու եղբայրն դեռ փորում էին։

Ամբողջ գիշերը մահասարսուռ ձորը իր ցուրտ, մեռելոտի շնչով, սարսափի շնչով հովհրեց քաղցի հալածական երկու որբերին, թշուառներից թշուառագոյններին, անշունչ դիակի կողքին, հողի ու արեան լճակի մէջ դեգերող, քաղցած, անհայր, անմայր, անտուն, անընկեր, անպաշտպան, գայլերի մէջ մնացած երկու որբերին։

Իսկ այն բուի չարագոյժ «վայը»...

Դիակները յօշոտող գազանների ոռնոցը, խռչխռչոցը դիակների...

Այս ամենը տեսան նրանք։

Ու երբ շառագոյն ամպերի միջից վերջապէս դուրս սահեց արևի շիկացած գունդը, Բերկրու ձորում արիւն-արցունք յորդացած գնում էր դէպի հիւսիս։ Նրա շողերը լցրին ձորը, ընկան նաև փոսի մէջ ու դիակի վրա։

Դիակը լուսաւորվեց։

Քոյր ու եղբայր փոսի մօտ, դիակի կողքին, արիւնոտ թաթիկները վեր բարձրացրած, ծունկ չոքեցին և վեր էին նայում։

Աղօթում էին...

Բայց ումը...

Ապա սկսեցին լալ ու երգել։

Ողբ էին ասում։

Ողբ՝ անթաղ հայրիկի, աւեր վաթանի... զուլումի օրերի... ու նորից հողը շուռ էին տալիս էն փորած փոսի, արիւնոտ փոսի մէջ...

«Բարափաւիկ» էին խաղում...

Կարաւանը անցնում էր, անուշադիր՝ մեծ ողբերգութեանը...

Արեգակը բարձրացել էր հորիզոնի ամենաբարձր կէտին։ Կէսօր էր։ Յուլիսեան խանձող ճառագայթները բարկ կրակի պէս այրում էին գետինը, ժայռերը։

Մեռելահոտը բռնել էր ձորը։

Խոնջած ու բեզարած կարաւանից մէկը կանգ առաւ.

— Է՞հ, դուք, պստիկներ, ինչ էք անում այդտեղ. խաղի ու երգի ժամանակ չէ, վեր կացէք, գնանք։

Ու նրանց հողոտ ու արիւնոտ ձեռքից բռնած՝ բարձրացրեց փոսից ու գրեթէ քարշ տալով առաջ անցաւ։

— Հայրիկը մնաց. հայրիկը։

— Հայրի՜կը, հայրի՜կը,—թոթվեց Մանիկը։

Բայց հոգատար անցորդը ամեն բան լաւ հասկանալով, պինդ բռնած, առաջ էր գնում։

—Հայրի՜կը, հայրիկը,—լսվում էր աղմկոտ կարաւանի միջից.

«Հայրիկ, հայրիկ»—ձայնեց արձագանքը։

Սովատանջ, յոգնած, արնաքամ կարաւանը «Աւետաց երկիրը» հասաւ։

— Արտօ՛ ու՞ր է հայրի՞կը, Բօզօ՞ն...

— Մանի՛կ, ու՞ր է մայրի՞կը, Բօզօն...

Հարցնում էին իրար երկու որբերը։

Ներքևեան լճի ափին, նոր ցամքած առուի մէջ նստած էին քոյր ու եղբայր։

Դժգոյն ու նուաղ։ Քաղցած էին ու հիւանդ։

Խօսում էին, բայց զառանցանք էր։

— Փորի՛, Մանի՛կ, խորենք հայրիկին։

— Մայրիկ, Բօզօ՛ն եկաւ, մեր Բօզօն. օհօ՛, Բօզօ՛, օ՛-հօ՛, օ՛-հօ՛. դէնը գնա, Բօզօ՛...

Ու այսպէս խօսեցին և հանգան նոր ցամքած առուի մէջ, աննկատ...

Միւս օրը երկու վարձկան մշակ՝ երկու դիակ ձգեցին մի ընդհանուր գիւպայլի մէջ ու տարան...

Ռ. Իսկենդէրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Հացթուխների ատեանը միջնորդել է քաղ. վարչութեան առաջ հացի սակագինը բարձրացնելու մասին: Մատնանշելով, որ սակագինը պատերազմի սկզբից մնում է նոյնը՝ $5\,^1/_2$ կոպէկ, այն ժամանակ, երբ Պետրօգրադում և Մոսկվայում ֆունտը ծախվում է 10 կոպէկով, Ռոստովում 6 կ., Խարկովում, Օդեսսայում և Բագւում՝ $6\,^1/_2$ կ., ատեանը նախազգուշացնում է, որ եթէ սակագինը չը բարձրացվի, իրանք հարկադրված կը լինեն դադարեցնել հաց թխելը և դրանով, հակառակ իրանց կամքի, ազգաբնակութիւնը կը մնայ կրիտիքական դրութեան մէջ:

◆ Այսօր քաղ. վարչութեան անդամ Մեք. Զաքար մեկնելու է Բագու ծանօթանալու Կասպից ծովով կենսամթերք ստանալու պայմանների հետ:

◆ Բժիշկ Սադեան և Տէր-Գրիգորեան Իգդիրից հեռագրում են Թիֆլիսի հայոց առաջնորդին, որ այնտեղի որբերի ապաստարանն են մտել սեպտ. 15-ից 240 որբ, որոնցից 30-ը իրանց ծնողների հետ դուրս են եկել Իգդիրից, 40-ը մեռել են, իսկ 50-ը հիւանդ լինելով պառկել են Բագ. Միութեան հիւանդանոցում: Ապաստարանում այժմ մնում են 120 առողջ երեխաներ: Հեռագրի մէջ ասվում է, որ ի նկատի ունենալով իշխանութեան պահանջը և շինութեան փոքրութիւնը, որբերին անհրաժեշտ է փոխադրել Թիֆլիս:

◆ Կովկասի Հայոց Գիւղատնտեսական Ընկ. Նոր-Բայազէդի և Ղազախի շրջանների գիւղերից ստացել է մի շարք դիմումներ, որոնցով այդ գիւղերը խնդրում են Ընկ.-եան, որ սա ձեռնտու պայմաններով ալիւր և ցորեն հայթայթի իրանց, որովհետև իրանցում տիրում է սաստիկ թանգութիւն. այսպէս օրինակ ալիւրի պուդը, այն էլ ամենավատ տեսակը, ծախվում է 3—4 ր.:

◆ Կիրակի, հոկտ. 25-ին, հայ փախստականների համար անկողնաշորերի և տաք հագուստների ժողովարութիւնը անցել է բաւականին աջող, առանձնապէս Հավլաբարում:

◆ Պետրօգրադի հայկական կոմիտէտի Ղարաքիլիսայում բացվելիք որբանոցի սկզբնական կառավարութիւնը ստանձնել են Պետրօգրադից եկած կոմիտէի լիազօրներ տ. տ. Աւրիէլեան և Սարգսեան, որոնք արդէն Իգդիրում, Երևանում, Էջմիածնում ժողովում են որբերին և օր. Մարիամ Աւրիէլեան, (իրաւաբան), որ վճռել է մնալ ամբողջ ձմեռը Ղարաքիլիսում իբրև ընդհանուր կառավարչուհի Պետրօգրադի կոմիտէի Ղարաքիլիսում բացած որբանոցին: Վերջինս երկուշաբթի օրը ժամանեց Թիֆլիս. երէկ այցելեց Տ. Նազարեանի փախստականների ապաստարանը, Նպաստամատոյց Ընկ. բացած որբանոցը ու երեկոյեան սանիտարական գնացքով մեկնեց ուղղակի Ղարաքիլիսա:

◆ Այսօր, հոկտ. 28-ին, տեղի կունենայ քաղաքի լազարէթների գլխաւոր բժիշկների խորհրդակցութիւնը, մասնակցութեամբ պրիվատ-դոցենտ Բարըկինի: Այս խորհրդակցութեան մէջ քննվելու է տիֆի և ուրիշ հիւանդութիւնների դէմ պատուաստումներ անելու հարցը:

◆ Կեանքի թանգութեան պատճառով քաղ. վարչութիւնը որոշել է հրդեհաշէջների խմբի ռոճիկը աւելացնել 2000 ռուբլով տարեկան: Իւրաքանչիւրի ռոճիկի վրա աւելացել է 2—5 ր. ամսական:

◆ Իրաւաբ. Իշխ. Ա. Բեհբութեան, որ իր գործերով մեկնեց Մոսկվա, քաղ. վարչութեան խնդրանօք ծանօթանալու է այնտեղի հացթխութեան գործի հետ և այդ մասին զեկուցելու է քաղաքագլխին:

◆ Դուման երկուշաբթի օրվայ իր նիստում որոշեց բարձրացնել կառքերի սակագինը:

◆ Հոկտ. 26-ին Թիֆլիսում ստացվել են հետևեալ մթերքները. ալիւր 6 վ., ցորեն 1 վ., շաքարաւազ 2 վ., շաքար 13 պուդ, գետնախնձոր 1 վ., հաճար 4 վ. և մազութ 3 վագոն:

◆ Ներկայումս Թիֆլիսում գտնվող ենթագնդապետ Խ. Գ. Արարատեան գերմանացիների դէմ աչքի ընկնելուն համար պարգևատրված է ս. Գէորգի 4-դ աստիճանի շքանշանով, պոդպորուչիկ Զիթողցեան՝ Վլադիմիրի 4-րդ աստճ. շքանշանով: Պարգևատրութեան են արժանացել նաև հետևեալ հայ զօրականները. Աննա 3-րդ աստճանի պրապորշչիկներ Ալէքսանդր Յակոբեան և Պետրոս Տէր-Յակոբեան, Աննա 4-դ աստ.՝ պրապորշչիկներ Արտաշ. Ներս. Այվազեան, Սարգիս Մոլեանց, Ալէքսանդր Յակոբեան, Յակոբ Այվազեանց, Յարութիւն Մահտեսի-Շահգելդեանց, Լևոն Խոսրոյեան և Յովսէփ Առաքելեանց: Ստանիսլաւ 3-դ աստ.՝ պրապորշչիկներ Արամ Յարութիւնեանց, Յակոբ Այվազեան, Թադէոս Ջիլօյեանց և Լևոն Տէր-Ստեփանեան:

◆ Բագւից Թիֆլիս է եկել հրէական մի պատգամաւորութիւն երկրի բարձր իշխանութեան առաջ միջնորդելու, որպէսզի վերացվի հրէայ փախստականներին արտաքսելու որոշումը: Այդ պատգամաւորութեան գալու օրը տեղական հրէական համայնքը գումարեց մի խորհրդակցութիւն հարցի առիթով:

◆ Այսօր զինւորական հաղորդակցութիւնների կառավարչի դիւանատանը կը լինի մի խորհրդակցութիւն՝ Անդրկովկասի ազգաբնակութեանը մթերքներ և ապրանքներ մատակարարելու մասին:

◆ Իրաւաբ. Գ. Ն. Կէյլը քաղաքային առևտրա-տնտեսական գործակալների հետ միասին հաւաքեց բոլոր կաթնավաճառ կանանց բորսայի շէնքը և նրանցից փորձի համար կաթը վերցրեց անալիզի համար: Այնուհետև ստուգեց բոլոր ամանները, որոնք բոլորն էլ կրում էին համապատասխան կնիքը:

ԿՈՎԿԱՍ

◆ Շուշուց մեզ հաղորդում են հետևեալը. «Տեխնիքական անյարմարութիւնների պատճառով «Փայլակ» թերթի հրատարակութիւնը դադարեցվում է մի առ ժամանակ»:

◆ Բագւում բացվել են Զինգերի խանութները: Առևտուրը կատարվում է հարկահաւաք տեսչութեան հսկողութեամբ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Զինւորական մինիստրութեան մէջ աւարտվեց սպիտակ տոմսը ունեցողներին նորից բժշկական քննութեան ենթարկելու հարցի քննութիւնը և ներկայացվեց ներքին գործերի մինիստրին, որ և հաստատեց նախագիծը: Վերջինիս համաձայն՝ զինւորական ծառայութեան պիտանի ճանաչվածները կը համարվեն երկրորդ կարգի երկրապահներ: Ցիշեալ նախագիծը շուտով վերջնական քննութեան է առնվելու մինիստրների խորհրդի նիստում: Մտադրութիւն կայ նախագիծը գործադրել 87-րդ յօդուածի կարգով:

◆ Արգելված է վաճառել դեղատներից և դեղօրայքի խանութներից սպիրտից պատրաստված օ-դը-կօլօն և այլ օծանելիքներ:

◆ Կարմիր Խաչը պատերազմի ընթացքում ծախսել է իր դրամագլխի կէսը՝ 50 միլիօն ռուբլի:

◆ Սահմանադիր-ռամկավարների ֆրակցիան և առաջադիմականների կոնֆէրէնցիան անհրաժեշտ են գտել Պետական Դումայի նստաշրջանի բացումը ամենամօտիկ ապագայում:

◆ Մայրաքաղաքի թերթերը յայտնում են, որ սպասվում են նոր փոփոխութիւններ մինիստրական կազմի մէջ:

◆ Մինիստրների խորհրդի նախագահ Գօրեմըկինը երեկոյեան ժամը 9-ից մինչև գիշերվայ ժամը 2-ը խօսակցութիւն ունեցաւ արդարադատութեան մինիստր Խվօստովի հետ:

◆ Փօղերանոցն արդէն պատրաստում է մանրաժէք թղթադրամներ:

◆ «РѢЧЬ»-ում տպված է միացեալ ազնուականութեան խորհրդի նախագահ Ստրուկովի նամակը Գօրեմըկինին: Այդ նամակի մէջ ասված է, որ միացեալ ազնուականութեան խորհուրդը ընդունում է, որ հասարակութեան որոշ մասը ձգտում է օգտվել պատերազմից՝ հասնելու համար ձախակողմեան հոսանքների փայփայած քաղաքական նպատակներին, որպիսի երևոյթը վտանգաւոր է երկրի հանգստութեան համար: Ուստի միացեալ ազնուականութեան խորհուրդը ձախակողմեան ճառերը մամուլի որոշ մասերում հրատարակելը համարում է տպագրական խօսքի ի չարը գործ դնել, որովհետև այդ ճառերը նախերգանք են հանդիսանում նոր խռովութիւնների՝ պետական կազմը փոխելու նպատակով: Միմիայն կայուն հիմունքներով ու միացած կառավարական իշխանութիւնն է, որ կարող է պաշտպանել երկիրը մտածողութեան երերումից և տալ յաղթութիւն: Ինչպէս յայտնի է, շատ ազնուական միութիւններ, ինչպէս Պետրօգրադինը և Մոսկվայինը, չը ստորագրեցին վերոյիշեալ գրութիւնը:

◆ Ներքին գործերի մինիստրի նախագահութեամբ Պետրօգրադում կայացաւ խորհրդակցութիւն փախստականներին և մատակարարական հարցերի առիթով: Դատարկված նահանգների կառավարիչները նշանակվելու են փախստականների տեղաւորող գլխաւոր լիազօրներ: Մատնանշվեց, որ ցանկալի է խուսափել ամեն տեսակ տարաձայնութիւնից զէմստվային և քաղաքային միութիւնների հաստատութիւնների վերաբերմամբ:

ՄԱՄՈՒԼ

Հայ մամուլի օրգաններից, «Մշակից» յետոյ, սկսել է իր կարծիքը յայտնել մեր «փրկիչների» մասին և «Հովիտ» շաբաթաթերթը, առիթ ունենալով «փրկիչների» բանակին յարած պրօզէլիտ Մին. Բեր.-ի «Кавк. Слово» թերթի մէջ տպած յօդուածը:

Հարկաւոր ենք համարում արտատպել Ս. Զ.-ի այդ յօդուածի—որ կրում է «Ուղղափառները և պրօզէլիտը» վերնագիրը (տես «Հովիտ» № 41)—միայն մի մասը, որովհետև նրա յետագայ մեծագոյն մասն անկարող ենք արտատպել՝ մեր կամքից անկախ պատճառներով:

Մի քանի կէտերի մասին մենք մեր կարծիքը կը յայտնենք մի այլ անգամ:

⁂

Ուղղափառները եւ պրօզէլիտը

Այն պրօզէլիտը, որի համար մենք ակնարկեցինք—ինչպէս որ անշուշտ գուշակած կը լինեն մեր ընթերցողները — պ. Մին. Բեր. է:

Իսկ նրա վերաբերմամբ խօսելու համար էլ՝ մեզ առիթ տուողն է նոյն այդ պ. Մին. Բեր.-ի՝ «Кавк. Слово» լրագրի № 224-ի մէջ տպված «Ուղիղ քայլ» վերնագրով յօդուածը:

Իր այդ անակնկալ յօդուածով պ. Մին. Բեր. խաչ է դնում իր անցեալ ազգային քաղաքական դաւանութեան վրա և գալիս է մեզ... Նոր երգ երգելու:

Մին. Բեր. հին «Նոր-Դարական» է: Տասնեակ տարիներ նա դաւանել է այն աշխարհահայեացքը, որը տրամագծօրէն հակառակ է եղել մեր «փրկիչների» և «ազատարարների» դաւանանքին: Իր այդ աշխարհահայեացքն էլ նա երկար տարիների ընթացքում պաշտպանել է, փաստաբանել է, նրա համար վիճել է, պայքարել է, մաքառել է: «Նոր-Դար» լրագրի խմբագրի բացակայութեան ժամանակ էլ պ. Մին. Բեր. եղել է այդ լրագրի նոյնիսկ պատասխանատու խմբագիր: Սպանդար Սպանդարեանի alter ego!

Ինչպէս որ «Հովիտի» նախորդ համարի Պարեվից գրած թղթակցութիւնից երևում է, պ. Մին. Բեր.-ի վարպետը—պ. Սպանդար Սպանդարեանը—մնացել է նոյն դաւանանքին, նոյն աշխարհահայեացքին, նոյն համոզմունքին, ինչ որ եղել է նա տարիներ առաջ, տասնեակ տարիներ առաջ:

Բայց Սպանդար Սպանդարեանի alter ego Մին. Բեր.-ը այժմ, ինչպէս տեսնում ենք, իր կեանքի միջօրէից յետոյ երես է դարձրել իր «Նոր-Դարական» դաւանանքից և անցել է «Հորիզոնականների» դաւանանքին:

Մի «զարմանալի» զուգադիպութեամբ, այն օրերից սկսած, երբ պ. Մին. Բեր. հրաւիրվեց Թիֆլիսի «Ազգ. Բիւրօյին» անդամակցելու և քիչ յետոյ հրաւիրվեց պաշտօնական հանդիսաւոր ներկայութեան օրը անդամակցել պ. Սամսոն Յարութիւնեանի շքախմբին—հէնց ճիշդ այդ օրերից սկսած—պ. Մին. Բեր.-ը սկսեց «այրել, ինչ որ մինչ այդ ժամանակ պաշտել էր, և պաշտել՝ ինչ որ առաջ այրել էր»:

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բորժօմ 3 ժ. 20 ր. ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագւից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագւից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բորժօմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Դուխիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

ԱՄԷՆ օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն:

Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—$9\,^1/_2$—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.:

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.:

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆ—12—1 ժ. երեքշ., հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.:

ԿԻՆ-ԲԺԻՇԿ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—182

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի: Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնովսկայա փող., № 18 (Վորոնցովի արձանի մօտ): Բժշկի բնակարան. Սեմեօնովսկայա, № 16.

(չ. ու. կ.) 1018. 100-99

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО,
ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ.

ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ
И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ
ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3.
ВЕРХНІЙ ЭТАЖЪ.

(չ. կ.) 761. 50—2

ՍՈՍԿԱԼԻ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ ԻՆՉՊԷՍ ԵՆ ՄԵՌՆՈՒՄ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ

Ջղային հիւանդները մեռնում են սրտի թուլութիւնից, ողնաշարի ուղեղի բորբոքումից, ուղեղի փափկանալուց, մասամբ խելագար դրութեան մէջ կամ ինքնասպանութեամբ յաճախ արբեցողութեան հետեւանքներից, ալկոհօլիզմից, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ձգտում հիւանդի կողմից գինով խեղդելու հիւանդութեան երեւան գալը: Ջղային հիւանդութիւնների նշանները ի միջի այլոց հետեւեալներն են. դիւրագրգռութիւն, վատ տրամադրութիւն, վերջաւորութիւնների դողդողումն, սրտի թրթռոց, գլխի պտոյտ, անքնութիւն, վերջաւորութիւնների ընդարմացում կամ կաշուի որոշ մասերի անզգայութիւն, կաշուի սուր զգայութիւն, կոկորդի, ձեռների և յօդերի ցաւեր, կրծքի ճնշումն, յիշողութեան թուլութիւն, ականջների աղմուկ, տարօրինակ ցանկութիւններ և այլն: Աւելի ծանր դէպքերում պատահում են մտաւոր կեանքի խանգարումները: Ջղային հիւանդութիւնները գլխի և ողնաշարի ուղեղային հիւանդութիւններ են: Անչափ աշխատանքի, վշտի, հոգսի, վախի կամ ընդհանրապէս առողջապահութեան կանոնները խանգարելու պատճառով ջղային սիստէմը թուլանում է: Յաճախ այդ թուլութիւնը ժառանգական բնոյթ է կրում: Ուժասպառութեան այդ դրութիւնները պէտք է վերացնել սիստեմատիկ կերպով ամրացնելով ջղային սիստեմը, մատակարարելով օրգանիզմին այն սննդառատ նիւթը, որը անհրաժեշտ կը համարվի ջղերի համար.

Իսկ դա ֆոսֆորն է, որ տարիների ընթացքում աստիճանաբար պակասում է մարմնից, ուրեմն հարկաւոր է այդ պակասը լրացնել:

Պարիզի յայտնի բժիշկ Գլէզին երկար աշխատանքից և փորձերից յետոյ աջողվել է պատրաստել միակ դեղը, որը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ ֆօսֆօր. այդ դեղը կոչվում է Ստիմուլօլ, որը վերականգնում է կորցրած երիտասարդութիւնը, առողջութիւնը և ընդհանուր ջղայնութիւնը և թուլութիւնը. արտասահմանի և Ռուսաստանի յայտնի պրօֆեսօրները, բժիշկները և հիւանդները տուել են իրանց գովասանքը և շնորհակալութիւնը և այժմ զանազան սանատորիաներում և հիւանդանոցներում բժշկում են հիւանդներին Պարիզի յայտնի բժիշկ Գլէզի հանճարեղ դեղով՝ Ստիմուլօլով... Ահա ինչ են գրում Ստիմուլօլի բժշկութեան մասին բժիշկները.

Իմ պրակտիկայի միջոցին «Ստիմուլօլով» բժշկումն անխտիր բոլոր դէպքերում տուել է փայլուն արդիւնք: Անհաղժուա քայքայումների Ստիմուլօլի օգնութեամբ կլինիքական բժշկման կատարած մեր դէպքերը տասնեակներից աւելի են, չը հաշուելով հիւանդանոց այցելող հիւանդներին:

Մեր դիտողութիւններով միշտ պատրաստ ենք Ձեզ ծառայելու:

«Ջղային ու ներքին հիւանդութիւնների կլինիկա»՝ Բժ. Ժակ Լերու-Մինօ:

Իսկական Ստիմուլօլը պատրաստվում է Ֆրանսիայում (Պարիզում), ամեն մի արկղը ունի գործարանի դրոշմը՝ Institut „D-r Calvet Paris". մի տուփը բաւական է, որ դուք զգաք նրա հուսալի գործողութիւնը եւ դուք կը ստանաք ձեր ուզած եռանդը եւ առողջութիւնը. դեղերի հետ ուղարկվում է բոլոր եւրոպական և Ռուսաստանի պրօֆեսօրների, բժիշկների, հիւանդների գովասանքները և շնորհակալական նամակները:

Պատուէրները, փողը և նամակները ուղարկել 1) Тифлисское отдѣленіе Института доктора Кальве, Тифлисъ, Эриванск. площ., Пушкинская 3, верхній этажъ, отд. 11|1 (Խնդրեմ հասցէն գրել լրիւ, ինչպէս որ ռուսերէն գրված է): Մէկ տուփը արժէ 7 ռուբ., ճամբապարհածախսով և վերադիր վճարով 50 կոպ. աւելի արժէ: Ով ուղարկի 7 ր. փողը առաջուց լրիվ, ճանապարհածախս չի վճարում:

Վերադիր վճարով ուղարկվում է միայն 2 ր. 50 կ. կանխավճար ստանալուց յետոյ:

(չ.) 609. 10—7

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ
ՄԻ ՍԵՆԵԱԿ

վառելիքով և լուսաւորութեամբ, հայ ինտելիգենտ ընտանիքում: Ամսական 20 ռուբլի: Հասցէ՝ Орловская, № 8.

778. 2—2

Մի տիկին
Ցանկանում է ընտանիքներում
ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ

Հայոց լեզուից փոքր երեխաների հետ կամ դաստիարակչուհու պաշտօն:

Араратская ул. № 2, Варвара Теръ-Макарянъ.

771. 2—2

Բացված է առաջիկայ 1916 թ. բաժանորդագրութիւնը

„ԱՂԲԻՒՐ" 34-րդ տարի եւ „ՏԱՐԱԶ" 27-րդ տարի

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱԶՄԱԲՈՎԱՆԴԱԿ ՁՈՒ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

Հարկ կա՞յ աւելացնելու, որ „Աղբիւրը" հայ մանուկի բարեկամը, մի քանի սերունդ է դաստիարակել, իսկ „Տարազը" հայ ՄԻԱԿ իլլիւստրասիոնն է, որ արտացոլում է հայ կեանքը և Միջազգային Մամուլից ճանաչված է իբրև հաչակաւոր հրատարակութիւն, իսկ համաշխարհական տպագրական ցուցահանդէսում, դեռ սրանից քսան տարի առաջ, պարգևատրված:

„ԱՂԲԻՒՐ"-„ՏԱՐԱԶԸ" իրանց անկախ, ազատ, անկուսակցական ուղղութեամբ պատկանում են համայն հայութեան:

«ԱՂԲԻՒՐԻ» տարեկան բաժանորդագինը 3 ր., «ԱՂԲԻՒՐ»-«ՏԱՐԱԶԸ» միասին 10 ր. (արտասահման 50 ֆր., կամ 40 շիլինգ): Հասցէն՝ Тифлисъ, Редакція «АГБЮР»-«ТАРАЗ». Tiflis, Direction «AGBÜR-TARAZ».

Խմբ.-հրատ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ.

Ծանօթ.—Նոր լոյս տեսնելիք «Վան-Տոսպ» շաբաթաթերթը, իբրև մեր փախստական եղբայրակիցների օրգան, խմբագրական իր յատուկ կազմն է ունենալու որոշ ֆիզիօնոմիայով և առնչութիւն չունի «ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ» հետ: (չ. կ.) 13. 3—2

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրժնի, I և II հատորներ	1 ր.	50 կ.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի		40 կ.
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր.	20 կ.
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի		40 կ.
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ		15 կ.
6) ՋԱՒՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանաճիւսութեան, Հ. Առաքելեանի		50 կ.
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	1 ր.	
8) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի		40 կ.
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի		40 կ.
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի		35 կ.
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով		15 կ.
12) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ Մ.-ի		15 կ.
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		30 կ.
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		25 կ.
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ, Մակ. եպ. Բարխուդարեանի		80 կ.
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ր.	50 կ.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլէրի, Թարգմ. Իս. Յարութիւնեանի.		40 կ.
18) ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եզեկեանի.		15 կ.
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.		20 кп.
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շխեանի		20 կ.
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շխեանի		25 կ.
22) ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՈԲԼԷՄԸ, Բ. Իշխանեանի		20 կ.
23) ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ, Գ. Տէր-Ռուբէնեանցի		10 կ.
24) ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Գ. Զթենցի		3 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա: Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի միայն 25%. (6) 0—2

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն.

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեռնականների բարբառով. Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով: Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով:

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել:

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ:

Տելեֆօն № 67.

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный